


612
L-88

757

758



12002

VII
2

2010

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 74

6/3.22

Դ-74

Ե. Ա. ՊՕԿՐՈՎՎԱԿԻՑ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՀՐԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳ. ԲԺ. Թ. ԶԱՔԱՐԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

Տպար. Վ. Վաշ Հրատ. Ընկ. | Տիպ. Грузин. Изд. Т-ва.

1894

Հանդամատչելի գլուխություն
1003
10180

Дозволено цензурою Тифлисъ, 18-го Февраля 1894 г.

16095

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը առաջարկեց ինձ թարգմանել բժ. Պօկրօվսկու „Օխ յածաւ ամայի ճեմական մատուցութիւններ” ժողովրդական գրքով։ Այդ գրքով կազմուած լինելով ոռւս ժողովրդի համար և յարմարեցրած լինելով ոռւս ժողովրդի կեանքին, ստիպուած էինք շեղուել հաւատարիմ թարգմանչի պարտականութիւնից և մտցնել մի քանի հարկաւոր փոփոխութիւններ։ Կային կտորներ, որոնք վերաբերում էին բուն ոռւսական վարքին ու սովորութիւններին. այդ սովորութիւնները չը կան հայ ժողովրդի մէջ, ուստի և այդ տեսակ կտորները պէտք էր բոլորովին բաց թողնել։ Եւ ընդհակառակ՝ կային խնդիրներ, որոնք վերաբերում էին միմիայն մեր կեանքին և որոնք, իհարկէ, չէին կարող լիշուած լինել Պօկրօվսկու գրուածքում. այդ տեսակ խնդիրները մենք անհրաժեշտ համարեցինք մտցնել գրքովի մէջ։ Կային նմանապէս կտորներ, որոնք չէին համապատասխանում գիտութեան նորագոյն հայեացքներին.

այդ կտորները նոյնպէս հարկաւոր էր բաց
թողնել:

Միջոց չունենալով աւելի մօտիկ կերպով
և աւելի մանրամասնօրէն ծանօթանալ այն
բուն հայ ժողովրդական սովորութիւնների
հետ, որոնք վերաբերում են երեխաների հո-
գատարութեանը, դժբախտաբար մենք պէտք
է զանցառութեան տայինք շատ անհրաժեշտ
խնդիրներ, որոնց բացակայութիւնը այս գըր-
քովի մէջ գուցէ զգալի լինի շատերի համար:

Բայց և այն տեղեկութիւնները, որոնք
ամփոփուած են այս գըրքոյի մէջ, յուսով ենք
որ անօդուատ չեն լինիլ մեր ժողովրդի համար:

ԲԺ. Թ. ԶԱՐԱՐԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀՈԳԱՏՈՒԹԻՒՆԸ

1. Ի՞նչ է ՀԱՐԿԱՒՈՐ ԱՌՈՂՉ ԵՐԵԽԱՆԵՐ
ԾՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հին առակը ասում է, որ կինը վարելա-
հող է, իսկ մարդը ցանելու սերմ, որից ապա-
գայում ծլում է նոր էակ—երեխան։ Այդ հա-
մեմատութիւնը շատ ճշմարիտ է։ Ինչպէս որ
բնութեան մէջ այն հողն է աւելի արգիւնա-
բեր, որը աւելի նոր և աւելի ուժեղ է, և
ինչպէս որ այն սերմն է աւելի պտղատու, որը
աւելի թարմ և աւելի խոշոր է, այնպէս և
այն ծնողներն են աւելի զօրեղ սերունդ առա-
ջացնում, որոնք աւելի առողջ և աւելի ա-
մուր են։

Մարդիկ սովորաբար աւելի ամուր և աւե-
լի առողջ են 20—30 տարեկան հասակում։
այդ պատճառով էլ այդ հասակի ծնող-
ների զաւակները աւելի խոշոր, աւելի
ծանր և աւելի առողջ են լինում, քան թէ

աւելի երիտասարդ կամ աւելի հասակաւոր
ծնողների զաւակները:

Ի՞նչ է սրա պատճառը:

Սրա պատճառը այն է, որ ինչպէս դեռատի, այնպէս և հասակաւոր կանալք սովորաբար չեն կարողանում լաւ դիմանալ յդութեան, նրանք դժուարութեամբ և անյաջողութեամբ են ծնում, և վերջապէս նրանց ծիծը բաւականաչափ կաթ չէ տալիս երեխային կերակրելու համար: Նոյնպէս և շատ երիտասարդ կամ շատ հասակաւոր տղամարդկանց զաւակները երբէք այնպէս ամուր և առողջ չեն լինում, ինչպէս միջակ հասակաւորներինը: Այդ պատճառով թէ շատ վաղ և թէ շատ ուշ՝ ամուսնութիւնը ոչ միայն չէ կարող առողջ սերունդ առաջ բերել, այլ և շատ անգամ պատճառ է լինում թէ մօր և թէ երեխայի կորստեան: Մեր հայրերի և պապերի ժամանակ ամուսնութիւնը շատ կանուխ էր կատարվում. բաւական էր եթէ փեսացուն 12—14 տարեկան լինէր, իսկ հարսնացուն 10—12 տարեկան: Մինչև այսօր էլ այդ վնասակար սովորութիւնը շարունակվում է գիւղերում: Պատահում է որ պսակում են մինչև անգամ աւելի փոքրներին:

Քանի տարեկան հասակում կարելի է պսակուել:

Այդ հարցին պատասխանելուց առաջ պէտք է նկատել, որ ամուսնութեան հասակը զանազան է զանազան երկրների համար: Աւելի ցուրտ, հիւսիսային երկրներում մարդիկ աւելի ուշ են հասնում. այդ պատճառով էլ պսակուելու տարիքը այնտեղ աւելի ուշ է. իսկ աւելի տաք, հարաւային երկրներում, որոնց թւումն է և մեր հայրենիքը, պսակուելու հասակը մի քանի տարով աւելի կանուխ է: Որուսաց մէջ օրէնքով միայն այն ժամանակ պսակը կարող է տեղի ունենալ, երբ փեսացուն սամենաքիչը 18 տարեկան է, իսկ հարսնացուն առնուազն 16 տարեկան: Սակայն, ինչպէս վկայում են Որուսաստանի փորձառութիշկները, այդ տարիքը փոքր է, այլ հարկաւոր է, որ փեսացուն լինի տոնուազն 20—22 և մինչև անգամ 25 տարեկան, իսկ հարսնացուն 18—20 տարեկանից ոչ պակաս:

Մեր երկրի և մասնաւորապէս հայերի համար՝ փեսացուն պէտք է լինի առնուազն 20 տարեկան, իսկ հարսնացուն՝ 16 տարեկան:

Պատահում է, որ նոյն իսկ մեր մէջ 16 տարեկան աղջիկը և 20 տարեկան պատանին

դեռ ևս Գիղիքապէս խակ են լինում և ան-
ընդունակ ամուսնութեան. և ընդհակառակը
պատահում է, որ 14 տարեկան աղջիկը և 18
տարեկան պատանին արդէն հասունացած են
ամուսնութեան համար: Այդ պատճառով փո-
խանակ տարիքի, աւելի լաւ է հետեւեալ կա-
նոնը ունենալ աչքի առաջ. աղջիկը կա-
րող է մարդու գնալ առաջին ամսա-
կանից առնուազն երեք տարի ան-
ցած, իսկ տղան կարող է պսակուել
երբ արբունքից անցել է գոնէ հինգ
տարի:

Կանոնաւոր կեանք վարելով՝ տղամարդը
մինչև 60 տարեկան հասակը, իսկ կինը մինչեւ
50 տարին՝ դեռ ևս առոյգ են և ընդունակ
ծննդաբերութեան: Իսկ անկանոն կեանքից,
չափազանց և ծանր աշխատանքից՝ որդեծնու-
թիւնը աւելի շուտ է ընդհատվում և ծերու-
թիւնը աւելի կանուխ է հասնում: Պսակուե-
լուց առաջ այդ բոլորը մարդ պէտք է աչքի
առաջ ունենայ: Բացի սրանից մարդ պէտք է
աչքի առաջ ունենայ և իր ունեցած հիւան-
դութիւնները: Շատ հիւանդութիւններ ամ-
բողջապէս անցնում են ծնողներից նաև իրենց
զաւակներին: Այդ բանը յայտնի էր դեռ ևս
ամենահին ժամանակներում. պարսիկների մէջ

դեռ ևս Քրիստոսից 900 տարի առաջ արգե-
լուած էր պսակուել թոքախտաւորներին,
ընկնաւորներին և մի քանի ուրիշ հի-
ւանդութիւններ ունեցողներին: Ալժմեան
օրէնքները չեն արգելում հիւանդներին ա-
մուսնանալ, սակայն ամուսնացողները կամ
նրանց ծնողները պէտք է լաւ հասկանան,
որ հիւանդութիւններից միշտ
ծնվում են նոյնպէս թուլ և հիւանդութ զաւակ-
ները: Այդ պատճառով ախտաւոր մարդկանց
համար ամօթ և յանցանք է առողջանալուց
առաջ ամուսնանալ, քանի որ այդ տեսակ ա-
մուսնութեան հետեւանքը ոչ թէ ուրախու-
թիւն, այլ ցաւ ու տանջանք է լինում:

Ամուսնանալուց յետոյ նախ և առաջ փո-
խադարձ սէր և համաձայնութիւն պէտք է
լինի մարդու և կնոջ մէջ: Ծնողների հաշտ
ու խաղաղ կեանքը մանուկների լաջող դաս-
տիարակութեան առաջին պայմանն է: Երբ
մարդ ու կին հաշտ չեն ապրում և միշտ
կովում են, այլ ևս ինչպէս կարող են նրանք
զբաղուել իրենց զաւակի դաստիարակութեամբ: Այդպիսի անհաշտ և անսէր կեանքը կատա-
րեալ դժոխք է ամուսինների համար և ամե-
նագառն գոյութիւն՝ նրանցից ծնուած զաւակի
համար:

Վատառողջ երեխաներ ծնելու պատճառ
ներից մէկն էլ ծնողների անկանոն և անժա-
մանակ սեռական յարաբերութիւնն է։ Սե-
ռական յարաբերութիւնը միայն այն
ժամանակ է օրինաւոր, եթք այդ յա-
րաբերութիւնից կարող է զաւակ
գոյանալ. հետեւաբար յղութեան և
ծիծ տալու ժամանակ ամեն մի սե-
ռական յարաբերութիւն ապօրինի է։
Սակայն ինչքան յաճախ մեղանչում են այդ օրէն-
քի դէմ, մանաւանդ հարբեցող մարդիկ։ Դեռ
ևս հին յունաց իմաստասէր Պլատոնը խոր-
հուրդ էր տալիս, որ մարդիկ հարբած ժա-
մանակ և առհասարակ հարբեցողները հեռու
պահեն իրենց՝ կնոջ հետ հաղորդակցութիւն
ունենալուց, որպէս զի խեղ և վտիտ զաւակ-
ներ աշխարհ չը բերեն։

2. Ի՞նչՊէս ՊէՏՔ է ՎԱՐՈՒԵԼ ՆՈՐԱԾԻՆ-
ՆԵՐԻ ՀԵՏ

Ծննդականները, մանաւանդ գիւղերում,
ծնում են սովորաբար տան ամենամուժ ան-
կիւններում, շատ անգամ նոյն իսկ գոմում
կամ մարաքում։ Սրա պատճառը մասամբ կա-
նացի ամօթխածութիւնն է, մասամբ էլ այն
նախապաշարմունքը, որ իբր թէ երեխալին
«վատ աչք» չը կպչի։ Ամօթխածութիւնը, ի-
հարկէ, լաւ յատկութիւն է, բայց նա լաւ է
միայն ժամանակ, եթք նրանից վնաս չը
կայ։ Երբ ծննդականը ծնում է մուժ և կեղ-
տոտ անկիւններում, աղբոտ գոմի մէջ կամ
սառը մարաքում, այդ վնասակար է թէ ծը-
նընդականի և թէ նորածնի համար. ծննդա-
կանը կարող է մրսել և վարակուել, իսկ նո-
րածինը, բացի մրսելուց և վարակուելուց,
կարող է նաև չոր գետնին կամ քարի կպչե-
լով վնասուել։ Այդ պատճառով պէտք է աշ-
խատել, որ ծննդականի սենեակը լինի, ինչքան
կարելի է, մաքուր և տաք. եթէ տանը միայն

մի սենեակ կայ, այն ժամանակ պէտք է ընտրել այդ միակ սենեակի ամենամաքուր մասը և առժամանակ հեռացնել բոլոր աւելորդ մարդկանց:

Ծննդաբերութիւնը մեզանում կատարվում է սովորաբար տգէտ տատմէրների ձեռքով, որոնք շատ անգամ փոխանտկ օգնելու վնասում են ծննդականներին: Այսպէս, օրինակ, երբ ծնունդը ուշանում է, տատմէրները թուլացած և տանջուած ծննդականներին ձեռքից բռնած սկսում են ման ածել սենեակի մէջ. եթէ այդ էլ չէ օգնում, այն ժամանակ սկսում են թափահարել, վեր ու վայր անել, զանազան դարմաններ խմացնել և ալլն: Այդ բոլորը, իհարկէ, բացի վնասից՝ ոչ մի օգուտ չէ տալիս:

Ամենից լաւն է ծննդաբերութեան համար հրաւիրել ուսում առած մանկաբարձուհիներ, որոնք այժմ գտնվում են համարեատմեն մի քաղաքում. իսկ եթէ մանկաբարձուհի չը կայ, այն ժամանակ հրաւիրել այն փորձառու տատմէրներին, որոնք մի քանի անգամ ներկայ են եղել մանկաբարձուհիների ընդունելութեան և սովորել են նրանցից, թէ ինչ հոգատարութիւն է հարկաւոր ծննդականին և նորածնին:

Երեխան աշխարհ՝ գալիս՝ տատմէրները շատ անգամ աշխատում են ընդունել երեխային իր հօր շապկի կամ վարտիկի մէջ, որ իբր թէ հայրը աւելի սէր ունենայ իր զաւակի վրայ և կամ զաւակը աւելի յարգանք ունենայ դէպի իր հայրը: Սակայն շապիկը և վարտիկը շատ անգամ այնպէս կոշտ և կեղտուտ են լինում, որ նորածնի քնքոյց մարմինը ենթարկվում է վտանգի: Սրանք բոլորը դատարկ և յիմար սովորութիւններ են: Նորածնին պէտք է ընդունել փափուկ և մաքուր շորի մէջ, մանաւանդ որ ծնուելու ժամանակ երեխանների մարմինը առանց այն էլ ենթարկվում է զանազան չանկուտածների, որոնք կոշտ և կեղտուտ շորերից կարող են վարակուել և բորբոքուել:

Ծնուելուց անմիջապէս յետով պէտք է պորտը կապել: Սրա համար հարկաւոր է վերցնել հաւի փետուրի հաստութեամբ բոլորովին մաքուր թել և պորտը կապել փորից երեք մատ հեռաւորութեամբ: Կապը ամուր հաստատելուց յետոյ, կապից մի մատ հեռաւորութեամբ պէտք է պորտը կտըել մաքուր մկրատով:

Եթէ երեխան ծնվում է թոլլ, ձախը

նոյնպէս թոյլ և վատ շնչառութեամբ, այն ժամանակ տատմէրները դիմում են հետևեալ խիստ միջոցներին. ապտակում են ետևի փափուկ մասերը, ճօճում են, վեր ու վայր են ձգում, քթի տակ քաթան են վառում, իրենց բերանով երեխայի բերանը շունչ են փչում, վրան սառը ջուր են ածում և ալդպիսով աւելի ևս թուլացնում են առանց այն էլ թոյլ էակին: Երեխայի թոյլ ոյժերը դրգուելու համար հարկաւոր է ամենից առաջ մաքրել նրա բերանը նախնական լորձունքից, փոքր ինչ սառնաւուն ջուր սրսկել, փափուկ քաթանով կուրծքը և ամբողջ մարմինը թեթևակի շփել և այնուհետեւ փաթաթել տաք շորերի մէջ:

Նորածնի մարմինը պէտք է մաքրել այն նախնական լորձունքից, որով սովորաբար ծածկուած է լինում նրա ամբողջ մարմինը և որը նման է ջրալի պանրի: Մարմինը մաքրելու համար աւելի լաւ միջոցն է ձուի գեղնուցը: Ձուի գեղնուցը պէտք է քսել ամբողջ մարմինը, մանաւանդ կոնատակերը, ոտների արանքները և այլ ծալքերը, և յետոյ՝ առանց սապոնի՝ մաքուր և գոլ ջրով լուանալ: Միեւնոյն սպատակով շատ տեղերում գործ են ածում քնջթի կամ կտաւատի իւղ. բայց իւղը առանց

սապոնի վայր չէ գալիս, իսկ սապոնը միշտ դրգուղ կերպով է ազդում երեխայի քնջոյշ մարմնի վրայ. այդ պատճառով ամենալաւ և ամենաընտիր միջոցը ձուի գեղնուցն է:

Երեխային պէտք է լողացնել կամ մաքուր ձեռքերով, կամ փափուկ քաթանով և կամ աւելի լաւ է մաքուր սպունգով. միայն թէ սպունգով լողացնելիս պէտք է երկու հատ սպունգ ունենալ՝ մէկով միայն երեսը, իսկ միւսով մարմնի մնացած մասերը լուանալու համար: Սպունգը գործածելուց առաջ ամեն անգամ պէտք է տաք ջրով լուանալ, ապա թէ ոչ սպունգի ծակոտիները կարող են լցնուել կեղտով և զանազան վնասակար նիւթերով:

Երեխային լողացնելու համար ամենից լարմար անօթը փայտեալ տաշտն է. միայն թէ պէտք է տաշտը լինի նոր, մաքուր և գործածուի միմիայն երեխային լողացնելու համար. այդ տաշտի մէջ ոչ լուացք պէտք է անել, ոչ գլուխ լուանալ և ոչ էլ զանազան իրեր պահել: Եթէ նոր տաշտ չը ճարուի, այն ժամանակ հինը պէտք է լաւ քերել, մի քանի անգամ տաք ջրով լուանալ և ապա գործածել երեխայի համար: Երեխային լողացնելուց առաջ պէտք է տաշտի մէջ փա-

փուկ և մաքուր շոր փուել և երեխային դը-
նել այդ շորի վրայ։ Զուրը պէտք է անքան
տաք լինի, ինչքան որ ախորդելի է երեխայի
համար. շատ տաք ջրից պէտք է զգոյշ լինել։
Տաք ջուրը սաստիկ ներգործում է երեխայի
քնքոյշ կաշուի վրայ, որը սկզբում կարմրում
է, յետոյ բշտրշտոտում, ճաքճքում և սկսում
նեխել։ Բացի սրանից, շատ տաք ջրից երե-
խան սաստիկ թուլանում և մինչև անգամ
մեռնում է։ Առաջին անգամ երեխային պէտք
է լողացնել ամենաշատը 5 րոպէ։ Լողացնելու
ժամանակ առանձին ուշադրութիւն պէտք է
դարձնել նաև աչքերի մաքրութեան վրայ։
Երեխաների աչքերը շատ հեշտ են ենթարկ-
վում զանազան հիւանդութիւնների, որոնք
մեծ մասամբ հետեւանք են անմաքրութեան։
Այն երեխաները, որոնց շուտ-շուտ չեն լո-
ղացնում, լինում են կեղտոտ և նրանց մար-
մինը շատ անգամ ծածկուած է լինում խոցե-
րով, բշտիկներով և վէրքերով։ Այդ բաներից
խուսափելու համար մինչև երկու տարեկան
հասակը շաբաթը գոնէ երկու անգամ պէտք
է լողացնել։ Լողացնելուց յետոյ պէտք է պոր-
տի մնացած մասը ամենամաքուր ձէթի մէջ
թաթախած քաթանով փաթաթել և փորին
կպցնելով՝ չոր շորով ծածկել. այնուհետեւ

103
101

վերցնել մի արշին երկարութեամբ և չորս
մատ լայնութեամբ շորի կտոր և այդ բոլորը
կապել փորին։

Ալդպէս պէտք է շարունակել ամենայն
օր՝ մինչև վեցերորդ շաբաթը, ապա թէ ոչ
պորտը կարող է վնասուել, վիրաւորուել և
մինչև անգամ կարող է աղէթափութիւն
(գրյաժա) գոյանալ։

Առհասարակ առաջին շաբաթը պէտք է
աշխատել, ինչքան կարելի է, քիչ ձեռք տալ
թէ երեխային և թէ ծննդականին. աւելի
լաւ է հանգիստ թողնել նրանց անկողնում։

Նորածին մանուկների աչքերն առհա-
սարակ շատ զգալուն են լինում։ Փորձը ցոյց
է տալիս, որ հարիւր երեխաներից երկու-ե-
րեքն են կոլը ծնվում, մնացածները իրենց աչ-
քի տեսութիւնը մանկութեան ժամանակն են
կորցնում, ծնողների անփութութեան և աչ-
քերի մաքրութեան վրայ հոգ չը տանելու
պատճառով։

Դրա համար հոգ պէտք է տանել, որ
մանկաբարձը նորածին մանկան աչքերը լաւ
մաքրի։ Ապա առաջին շաբաթը ամեն օր, բա-
ցի լողացնելուց, պէտք է աչքերը յաճախ լու-
նալ։ Եւ յետոյ սկսելով երկրորդ տարուց, երբ

Երեխան մեծանում է, պէտք է նրան ամենաքիչը շաբաթը մի անգամ լողացնել, թէ չէ նրա մարմնի վրայ կարող են հաւաքուել կեղտութիւններ, որից յետոյ կերևան բշտիկներ, ուռուցներ և ուրիշ վէրքեր:

3. Ի՞նՉՊէՍ ՊէՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ՇՇԿԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Նորածնի առաջին կերակուրը պէտք է լինի իր մօր կաթը: Այդ է պահանջում նոյն իսկ բնութիւնը, այդ է պահանջում և դարաւոր փողձն ու գիտութիւնը: Մայրական կաթը ամենասննդարար և ամենամարսելի կերակուրն է նորածնի համար: Միայն այն մանուկներն են իրենց բոլորովին առողջ և ամուլ զգում, որոնք հէնց առաջին օրից սընվում են իրենց մօր կաթով միայն. այդպիսի մանուկները լացկան չեն լինում, չեն տանջվում զանազան փորացաւերից և փորհարութիւններից, և չեն տանջում իրենց լացով և աղաղակով նաև իրենց ծնողներին: Իսկ

Եթէ մայրերը շեղվում են այդ օրէնքից և փոխանակ ծծի՝ սկսում են երբեմն-երբեմն կերակրել երեխային և շաբարաջրով կամ կովի կաթով և կամ այլ կերակրով, այն ժամանակ շուտով երևան է գալիս սաստիկ փորացաւ և նա սկսում է գոռալ ու լաց լինել:

Առաջին անգամ երեխային ծիծ պէտք է տալ ծնունդից երկու-երեք ժամ յետոյ, եթէ միայն, իհարկէ, մինչև այդ ժամանակ բաւականաչափ կաթ ժողովուած կը լինի մօր ծըծերում: Իսկ եթէ մի կամ երկու օր դեռ ևս կաթ չէ գալիս մօր ծծերից, աւելի լաւ է թողնել երեխային բոլորովին առանց ծծի և ոչինչ չը տալ, որովհետև նորածին երեխան առանց վնասի կարող է մէկ կամ երկու օր ոչինչ չուտել: Բայց ամենքը գիտեն, որ ծընընդականի ծծերում միշտ լինում է փոքր քանակութեամբ արաժան, որը թէւ իսկական կաթ չէ, բայց շատ օգտակար է նորածնի համար, որովհետև նրա շնորհիւ երեխան ըսկըսում է լուծել և սրբվում է ծննդական աղբից: Այդպիսով օգտակար է հէնց առաջին օրից ծիծ տալ երեխային, թէկուզ առաջին օրերը նա ծծի մի քանի կաթիլ միայն այդ արաժանից:

Ծիծ պէտք է տալ կանոնաւոր կերպով
և որոշեալ ժամանակներին. ցերեկը երկու
կամ երեք ժամից յետոյ, իսկ գիշերը երեք
կամ չորս ժամից յետոյ: Այդ վերաբերում է
ծննդեան առաջին օրերին. իսկ այնուշետև
առաջին ամիսների ընթացքում օրական 7—8
անգամ, իսկ սկսած վեցերորդ ամսից 4—5
անգամ: Շուտ-շուտ ծիծ տուլը վնասում է
երեխալին, խանգարելով նրա ստամոքսը և
առաջացնելով փորհարինք ու փսխողու-
թիւն: Կանոնաւոր կերակրուող երեխաները
առողջ և զուարթ են լինում, լաւ մեծանում
են, լաւ քնում և չեն չարչարում, այլ
միմիայն ուրախութիւն են պատճառում իրենց
ծնողներին:

Առհասարակ սովորութիւն է դարձել մայ-
րերի համար, որ հէնց որ երեխան սկսում է
լաց լինել, իսկոյն ծիծը կոխում են բերանը.
այդպիսով երեխաներին սովորեցնում են անկարգ
և անկանոն սննդառութեան: Եթէ երեխան
սկսում է անժամանակ լաց լինել, պէտք է
նախ քան ծիծը բերանը կոխելը՝ լաւ քննել,
թէ արդեօք ինչ է լացի պատճառը: Նատ ան-
գամ երեխաները լաց են լինում, երբ տակ-
ները թրջվում են կամ երբ բարուրի քողերը

պինդ կապոտած են լինում և կամ վերջապէս
երբ նեղվում են լուից, ոջից, մլակից, և այլն:
Ուստի ամենից առաջ պէտք է տեսնել, թէ
արդեօք այդ պատճառներից որևէիցէ մէկը կալ,
թէ ոչ. և եթէ չը կալ, այն ժամանակ միայն
դիմել ծծի օգնութեան:

Երեխալին պէտք է կերակրել երկու ծը-
ծով էլ նախ մէկով և ապա միւսով. իսկ ե-
թէ մի ծիծը հիւանդ է, այն ժամանակ մի-
միայն առողջ ծիծը տալ, որովհետև հիւանդ
ծծից երեխան էլ կարող է հիւանդանալ:

Ծիծ տալիս մայրը պէտք է նստած լինի,
երեխալին դնի ծնկների վրայ և փոքր ինչ կը-
ռանալ. այդ դիրքով երեխան աւելի լաւ է
ծծում, աւելի շուտ և տաելի լաւ է կշտա-
նում. կանգնած կամ մանգալով ծիծ տալը
վատ է, որովհետև երեխան չէ կարող կաթը
ծծել ինչպէս հարկաւոր է:

Ծիծ տալիս մայրը պէտք է ուշադրու-
թիւն դարձնի, որ ծիծը երեխալի քիթը չը
բռնի, որպէս զի երեխան կարողանայ ազատ
շունչ քաշել. այդ պատճառով մայրը պէտք է
ծիծը մատներով բռնի և միայն պտուկը դնի
երեխալի բերանին, թէ չէ երեխալի շնչառու-
թիւնը արգելվ չ' մ է և նա չէ կարողանում

անընդհատ ծիծ ուտել և կշտանալ ինչպէս որ
հարկն է:

Երբեմն ծիծ տալիս կաթը սկսում է ինքն
իրեն սաստիկ վազել. այդ դէմքում ևս մայրը
պէտք է մատներով պտուկը բռնէ, թէ չէ
կաթը կարող է թռչել երեխայի կատկին և
ընդհատել սննդառութիւնը:

Եթէ կաթը դժուարութեամբ է գալիս
և երեխան էլ թոյլ է ծծում, այն ժամանակ
մայրը պէտք է մատներով ծիծը սեղմի, որ-
պէս զի կաթը հեշտութեամբ դուրս գալ:

Առողջ երեխայի համար բաւական է ծիծ
ուտել քառորդ ժամ. և երբ ծիծը ուտելուց
լետով երեխան սկսում է ներհել, պէտք է զգու-
շութեամբ վերցնել և դնել օրօրոցում. քնած ե-
րեխային երբէք չը պէտք է թռղնել ծծի վրայ:

Մայրը երբէք երեխան կը ծքին
չը պէտք է քնի, որովհետեւ կարող է երե-
խան վայր ձգել անկողնից և կամ խեղդել
նրան, ինչպէս որ շատ անդամ սլատահել է և
պատահում է: Բացի սրանից, երեխայի համար
միշտ վնասակար է հասակաւորի հետ միասին
պառկելը, որովհետեւ շատ անդամ հասակաւոր-
ները քրտնած են լինում և քրտինքով օդը
ապականում են, որը, իհարկէ, վնասակար է

քնքոյշ մանուկի համար. հասակաւորները նաև
հեշտութեամբ կարող են վարակել երեխանե-
րին զանազան հիւանդութիւններով և կեղտոտ
միջատներով (լու, ողիլ և այլն):

Ծիծ տուող մայրը պէտք է ծծե-
րը միշտ մաքուր պահի, ուստի հարկա-
ւոր է գոնէ ամեն առաւօտ ծծերը լուանալ
իսկ ամեն անդամ ծիծ տալուց յետոյ մաքրել
մաքուր և չոր քաթանով. թէ չէ մօր պտուկ-
ները թթուած կաթից հեշտութեամբ կարող
են ճաքճաքել և հիւանդանալ:

Բացի սրանից, հարկաւոր է ամեն օր,
օրական գոնէ երկու անդամ, մաքուր և փա-
փուկ քաթանով լաւ մաքրել երեխայի տմբողջ
բերանը—այտերը, լնդերքը, լեզուն և կատի-
կը. թէ չէ կաթի մնացորդը երեխայի բերա-
նում թթվում է և առաջացնում է «ծաղիկ»
(բերան հարինք) ասուած բերանի հիւ-
անդութիւնը, որը արգելում է կանոնաւոր
մնունդ առնելուն: Երեխան սկսում է անհան-
գիստ լինել, ցաւից լաց մինել և վերջ ի վեր-
ջոյ հիւանդանում է:

Երեխայի լաջող սննդառութեան համար
հարկաւոր է, որ մայրը ազատ լինի ծանր
աշխատանքից և հոգեկան յուզմունքից:
Եթէ մայրը յոգնած է կամ յուզուած,

նախ քան ծիծ տալը՝ նա պէտք է հոգեպէս
և մարմնապէս հանգստանայ, յետոյ կաթը
բաժակի մէջ մի քիչ կթի և ապա սկսի ծիծ
տալ երեխային:

Քանի որ մայրը ծիծ է տալիս երեխային,
պէտք է որ մօր կերակուրը, ինչքան կարելի
է, սննդաբար և պարզ լինի—մսեղէն, կաթնե-
ղէն, ձկնեղէն, ձու, խմորեղէն, կանաչեղէն և
այլն: Պէտք է զգոյշ լինել շատ իւղալի և
հում կերակուրներից, մանաւանդ երբ ե-
րեխայի աղբը ջրալի է և կանաչագոյն:

Եթէ մայրը կերակրվում է կոշտ, հում
և իւղալի կերակուրներով, ինչպէս, օրինակ,
թթու կաղամբով, վարունգով, սոխով և ալն,
այն ժամանակ երեխայի փորը խանգարվում է
և գոյանում է վտանգաւոր փորհարինք:

Խմելու համար ամենալաւ ըմպելիքն է
ջուրը, թէլը և կաթը. ինչքան որ մայրը շատ
խմի, այնքան աւելի կաթ կունենայ: Զափա-
զանց վնասակար է երեխայի համար, երբ մայ-
րը օղի, գինի և ուրիշ ոգելից ըմպելիքներ
է գործածում. այդ տեսակ մայրերի երեխա-
ները երբէք առողջ չեն լինում և սովորաբար
շուտով մեռնում են:

4. ՄԱՅՐԸ ՄԻՇՏ ԿԱՐՈՂ Է ԾԻՇ ՏԱԼ ԻՐ
ԵՐԵԽԱՅԻՆ ԹԻ ՈՉ

Առողջ մայրը պարտական է ինքը ծիծ
տալ իր զաւակին: Այդ մի օրէնք է, որ սահ-
մանուած է նախախնամութիւնից: Սեփական
մօր ծիծը ուտող երեխաները աւելի կանոնա-
ւոր կերպով են աճում, աւելի առողջ են լի-
նում և աւելի քիչ են մեռնում:

Արդէն փորձուած և հաստատուած է,
որ ամենից շատ մեռնում են կովի կաթով
և այլ նիւթերով սննուղ երեխաները. սրանցից
աւելի քիչ են մեռնում ծծմալրների կաթով
մեծացողները. իսկ ամենից քիչ մեռնում են
հարազատ մօր ծիծ ուտողները: Թող ուրեմն
մայրերը լաւ մտածեն, թէ որքան վատ են
վարփում, երբ հրաժարվում են իրենց սեփա-
կան զաւակներին իրենց ծծով կերակրելուց:
Ամեն մի մօր պարտականութիւնն է առողջ
զաւակներ ունենալ: Մինչեւ մայրերը շատ
անգամ ամենաչնչին և շահասիրական պատ-
ճառներից դրդուած՝ թողնում են իրենց երե-

խաներին օտարների յոյսով։ այդ տեսակ երեխաները մեծանում են ինչպէս որբուկներ, սնվում են անկարգ և անկանոն կերպով, անպէտք և վնասակար նիւթերով և, ի մեծ ամօթ իրենց անամօթ մայրերի, կոտորվում են ճանձերի նման։ Թող այդ տեսակ մայրերը լաւ իմացած լինեն, որ իրենք որդեսպաններ են, որ իրենք սպանում են իրենց զաւակներին, հրաժարուելով իրենց մայրական պարտականութիւնից և յանձնելով իրենց զաւակներին օտարների խնամքին։ Այդ տեսակ մայրերը ամենամեծ յանցաւորներ են թէ մարդկութեան և թէ նոյն իսկ Աստուծոյ առաջ։

Կան միայն մի քանի դէպքեր, երբ մայրը, իր ցանկութեան հակառակ, լիրաւի անկարող է ծիծ տալ իր զաւակին։ Այդ դէպքերը հետեւեալներն են.

1) Երբ մայրը ենթարկուած է ծանր հիւանդութիւնների, ինչպէս, օրինակ, թոքախտի, ընկնաւորութեան և սիֆիլիսի.

2) Երբ մօր պտուկները անպէտք են, այսինքն չափազանց փոքր կամ մինչև անգամ ներս ընկած են, այնպէս որ երեխան չէ կարող պտուկը բերանով բռնել և ծծել.

3) Երբ պտուկները ճաքճքուած են.

4) Երբ ծծերն ուռած են և հիւանդ։ Բոլոր այս դէպքերում պէտք է դիմել բժշկի և կամ փորձառու անձանց խորհրդին և իմանալ, թէ արդեօք կարող է մայրը ծիծ տալ երեխային, թէ ոչ։ Եթէ մայրը անկարող է, այն ժամանակ նա հրաժարվում է ծիծ տալուց, աչքի առաջ ունենալով նոյն իսկ երեխայի շահը։

5. Ի՞նչՊԵՍ ՊԵՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԵՐԵԽԱՆԱՌՈՅՆՑ ՄՈՐ

Եթէ մայրը որևիցէ պատճառով չէ կարող ինքը ծիծ տալ երեխային, այն ժամանակ պէտք է աշխատել, որ ազգականներից կամ հարևաններից մէկը յանձն առնի ծիծ տալ, մինչեւ որ կարելի կը լինի երեխային ուրիշ բանով կերակրել։ Պատահում է, որ մի տան մօր երեխան է մեռած լինում, իսկ մի ուրիշ տան երեխայի մալրն է մեռած լինում։ ահա այդ դէպքում մեռած երեխայի մայրը կարող է լաւ ծծմալը լինել մեռած մօր երեխայի համար։ Առանձնապէս պէտք է աշխատել, որ

գոնէ առաջին երկու-երեք ամիսը երեխան զուրկ չը մնայ ծծի կաթից, մանաւանդ երբ երեխան թոյլ կազմուածքի տէր է:

Իսկ եթէ ոչ մի հնար չը կայ երեխային ծծով կերակրելու, այն ժամանակ, իշարկէ, ակամայ պէտք է կերակրել կովի կաթով։ Կովի կաթը երեխայի ստամոքսի համար աւելի կոշտ և աւելի ծանր է, քան թէ կնոջ կաթը, ուստի գոնէ փոքր ի շատէ թեթեացնելու համար՝ պէտք է կովի կաթը խառնել եռ եկած ջրով և շաքարով։ Ջրի քանակութիւնը կախուած է երեխայի հասակից. առաջին շաբաթը մի բաժակ կաթը պէտք է խառնել երեք բաժակ ջրի հետ և լաւ եռացնել. սկսած երկրորդ շաբաթից մինչև երկու ամիս՝ մի բաժակ կաթի համար պէտք է վերցնել երկու բաժակ ջուր. սկսած երրորդ ամսից մինչև հինգերորդ ամիսը՝ մի բաժակ կաթին նոյնպէս մի բաժակ ջուր. այնուհետեւ մինչև վեցերորդ ամսի վերջը՝ երկու բաժակ կաթի համար բաւական է մի բաժակ ջուր. իսկ վեց ամսիը լրանալուց յետոյ կարելի է կերակրել արդէն անխառն կաթով։ Կաթը պէտք է լինի նոր կիմած և երեսը չը քաշած։

Այս ընդհանուր կանոնից կարելի է դուրս

դալ միայն այն ժամանակ, երբ երեխայի փոքրը սկսում է լուծել. այդ դէպքում ջրի քանակութիւնը պէտք է պակասեցնել. իսկ ընդհակառակը եթէ փորբ պինդ է, ջրի քանակութիւնը պէտք է աւելացնել։ Եթէ երեխան լաւ է մարսում կովի կաթը, այն ժամանակ նոյն իսկ երեք ամսից յետոյ կարելի է արդէն անխառն կաթ գործ ածել։ Խնչքան շուկան կերակրել երեխային անխառն կաթով, այնքան աւելի լաւ է երեխայի համար, որովհետեւ ջրախառն կաթի սննդարարութիւնը աւելի պակաս է։ Բայց չը պէտք է մոռանալ, որ անխառն կաթը նորածինների համար աւելի կոշտ և աւելի ծանր է։ Ուստի զի ջրախառն կաթը աւելի նման լինի կնոջ կաթին, ամեն մի բաժակ ջրի վրայ պէտք է մի կատը շաքար աւելացնել, իսկ անխառն կաթը պէտք է տալ առանց շաքարի։

Բացի շաքարից, չափազանց օգտակար է խառնել կաթի հետ նաև կալաքար (сода), որ շատ էժան բան է և ամեն տեղ կարելի է գտնել։ Կալաքարի ազդեցութեամբ կաթը աւելի կակուղ և աւելի դիրամարս է դառնում։ Ամեն մի բաժակ ջրի համար բաւական է վերցնել մի պտղունց կալաքար, այսինքն

մօտաւորապէս այնքան, ինչքան, որ աղ են
վերցնում մի աման կերակրի համար: Երբ
երեխալի փորը սկսում է լուծել, այն ժամա-
նակ կալաքարը պէտք է թողնել, մինչև որ
փորը դարձեալ կտնօնաւորուի:

Բացի կովի կաթից, կարելի է գործածել
նաև այծի, մատակի, իշխ և ուրիշ կենդանի-
ների կաթ. բայց կովի կաթը, իհարկէ, աւելի
դիւրամատչելի, աւելի էժան և աւելի գոր-
ծածական է, թէև իշխ կաթը իր բաղադրու-
թեամբ ամենից աւելի մօտ է կնոջ կաթին,
հետեաբար և աւելի օգտակար:

Երբ վերջնականապէս որոշուած է կե-
րակրել երեխան կովի կաթով, այն ժամանակ
չը պէտք է մոռանալ, որ կովը ծծմօր գեր է
կատարում, ուստի և հարկաւոր է առանձին
խնամք տանել այդ ծծմարդ-կովի վրայ: Նախ
պէտք է ընտրել առողջ և լաւ կաթ տուող
կով. պէտք է լաւ և մաքուր պահել նրան և
ուշագրութիւն դարձնել, որ կաթի մէջ ոչ մի
կեղտոտ կամ վնասակար բան չընկնի: Չմեռը
երբեմն-երբեմն կովին պէտք է դուրս հանել
գոմից և թոյլ տալ ազատ օդ ծծելու, իսկ
ամառը ամբողջ օրը պէտք է թողնել արօտա-
տեղում: Նրա կերակուրը պէտք է լինի հա-
սարակ և առողջաբար—մաքուր թարմ կամ

չոր խոտ. նրա խմելիքը—մաքուր ջուր, որի
հետ կարելի է խառնել նաև ալիւր, թեփ և
փոքր ինչ աղ: Կեղտոտ մնացորդներից հեռու
պէտք է պահել կովին, որովհետև կարող են
զանազան վնասակար նիւթեր խառնուել կա-
թի բաղադրութեան հետ և վնասել երեխալին:

Կաթը՝ կթելու ժամանակ և կթելուց յե-
տուի՝ պէտք է պահել ամենամաքուր ամանի
մէջ, որը ամեն անգամ պէտք է լուանալ ե-
ռացող ջրով և չորացնել. կաւի ամանները
պէտք է թոնրի կամ վառարանի մէջ ըովել: Կաթը նոյնպէս պէտք է անպատճառ եռաց-
նել, որովհետև հում կաթի մէջ կարող են
լինել զանազան վտանգաւոր նիւթեր: Եռաց-
նելուց յետոյ կաթը պէտք է պահել սառը
տեղ և ամեն անգամ գործածելուց առաջ
փոքր ինչ տաքացնել: Առհասարակ պէտք է
միշտ աչքի առաջ ունենալ, որ ծծկեր երե-
խաներին ոչինչ սառած բան չէ կարելի տալ,
թէ չէ նրանք շատ շուտով մըսում և հիւան-
դանում են: Չուրը պէտք է խառնել ամեն
անգամ կաթը տալուց առաջ. աւելի լաւ է
փոխանակ իրաքանչիւր անգամ կաթը
տաքացնելու, վերցնել տաք ջուր:

Կովի կաթով կերակրելու ժամանակ աւե-

լի ևս խիստ ու կանոնաւոր պէտք է լինել,
որովհետեւ այդ դէպքում ամեն մի զանցառու-
թիւն աւելի վտանգաւոր է, քան թէ մօր
ծիծը ուտելու ժամանակ։ Պէտք է աչքի ա-
ռաջ ունենալ հետեւեալ կանոնը. —

Առաջին ամիսը պէտք է տալ օրական ուժ
անգամ, ամեն անգամ 3 խոր գդալ*) ջրա-
խառն կաթ. երկրորդ ամիսը օրական 7 անգամ՝
իրաքանչիւր անգամ 5 գդալ. երրորդ ամիսը —
6 անգամ՝ իրաքանչիւր անգամ 6 գդալ. իսկ
այնուհետեւ կարելի է տալ իրաքանչիւր ան-
գամ 8 գդալ՝ օրական 5 — 6 անգամ։

6. ԾՇԻԿՆԵՐ ԵՒ ՊՏՈՒԿՆԵՐ

Առաջին ամիսները երեխային չը պէտք
է կերակրել գդալով, որովհետեւ նախ՝ շատ օդ
է մտնում երեխայի փորը, որից և նա ուռ-
չում է, և երկրորդ՝ երեխան կորցնում է ծը-
ծելու բնդունակութիւնը և հարկաւոր դէպ-
քում այլ ևս դժուարութեամբ է սովորում
ծծել։

Այս պատճառով գոնէ առաջին ամիսները
պէտք է կաթը տալ ծծիկներով, որոնցից ա-
մենայարմարը ապակեալ ծծիկներն են, որով-
հետեւ սրանք աւելի մաքուր են։ Եղջիւրեալ
կամ փալտեալ ծծիկները անյարմար են նրա-
նով, որ շատ յաճախ ճաքճքում են. այդ
ճաքճքուածների մէջ կաթը մնում ու թրթ-
վով մտնում է երեխայի ստամոքսը, երեխան
սկսում է տկարանալ, փսխում է, փորը ցա-
ւում է, լուծում է և վերջապէս բոլորովին
հիւանդանում։ Մետաղեալ ծծիկները, օրինակ

*) Խոր գդալ ասելով՝ հասկանում ենք մօտա-
ւորապէս երկու սովորական հացի գդալ։

արծաթեալ կամ թիթեղեալ ծծիկները, աւելի յարմար ու լաւ են, բայց դարձեալ աւելի վատ են, քան թէ ապակեալ ծծիկները. այդ պատճառով պէտք է միշտ ապակեալ ծծիկներ գործածել: Պէտք է նոյնպէս աչքի առաջ ունենալ, որ ծծիկները շատ երկար ու նեղ չը լինեն, որովհետև այդ տեսակները դժուարութեամբ է մաքրվում:

Ծծիկների համար գործ են ածվում սովորաբար ըեզինի կամ կովի պտուկներ: Աւելի յարմար է վերջին տեսակը, եթէ միայն լաւ է պատրաստած. լաւ կովի պտուկ պատրաստելու համար պէտք է վերցնել կովի պտուկը, հանել միմիայն կաշին, չը թողնելով նրա վրայ ոչ մի կտոր միս կամ ճարպ, ապա այդ կաշին լաւ չորացնել: Այդ տեսակ պտուկներ կարելի է գնել շատ գեղատներում: Ռեզինի պտուկը անյարմար է նրանով, որ երեխայի լորձունքից շուտով փչանում է:

Պտուկը պէտք է միշտ վերին աստիճանի մաքուր պահել. իրաքանչիւր անգամ գործածելուց յետոյ պէտք է գնել մաքուր ջրի մէջ: Սովորութիւն է որ պտուկը գործածելուց առաջ մայրը կամ ուրիշները պտուկը դնում են ըերաններին, իբր թէ տաքացնելու համար.

այդ սովորութիւնը շատ վտանգաւոր է, որովհետև հասակաւորների բերանից շատ անգամ կարող են պտուկի միջոցով հաղորդուել երեխաներին ամեն տեսակ հիւանդութիւններ կամ վտանգաւոր նիւթեր:

Պտուկը պէտք է տալ երեխային միայն այն ժամանակ, երբ նա կաթ է ծծում և ոչ թէ երեխայի լացը կտրելու կամ նրան զբաղեցնելու համար: Այդ սովորութիւնը շատ անգամ պատճառ է լինում զանազան բերանի հիւանդութիւնների, և բացի դրանից, վնասակար է երեխայի ատամների համար:

Այստեղ չենք կարող կանգ չառնել և մի ուրիշ վտանգաւոր և վնասակար սովորութեան վրայ, որը գժեախտաբար շատ տարածուած է մեր մէջ: Խօսքս խաշխաշի գործածութեան մասին է: Հէնց որ երեխան սկսում է անհանգիստ լինել, մանաւանդ երբ գիշերները շատ լաց է լինում և չէ թողնում մօրը հանգիստ քնել, իսկոյն հրապարակ է գալիս խաշխաշը: Խաշխաշի ազդեցութեան տակ լիրաւի երեխան քնում է, որովհետև խաշխաշի մէջ գտնվում է օպիում (թիրեաք) ասուած թոյնը, որը հարթեցնում և քնեցնում է մարդուն: Բայց մէկ անգամ որ երեխան սովորում է խաշխա-

շին, այնուհետեւ նա այլ ևս առանց այդ մի-
ջոցի չէ կարող քնել, ուստի խաշխաշի գոր-
ծածութիւնը դառնում է սովորութիւն։ Ի՞նչ
կամէիք այն մօրը, որը ծծկեր երեխալին սով-
րեցնէր գինու և օղու, այսինքն հարբեցողու-
թեան. իսկ խաշխաշը միւնոյն հարբեցնող
նիւթն է, միայն թէ գինուց և օղուց աւելի
խիստ, աւելի վտանգաւոր։ Բարեբախտաբար
խաշխաշին սովորած երեխաները երկար չեն
ապրում և մեռնում են մանկութեան առաջին
իսկ տարիներում։ Ասում ենք բարեբախտաբար,
որովհետեւ խաշխաշով մեծացած երեխաները
եթէ որևիցէ հրաշքով կարողանում են մա-
հից ազատուել և մեծանալ, նրանք սովորա-
բար լինում են ապուշներ, խեղեր, հոգեկան
և ջղային հիւանդներ, թոյլ և վտիտ արա-
րածներ, անընդունակ որդենութեան և գոր-
ծունէութեան։ Զափազանցութիւն չի լինիլ,
եթէ ասենք, որ խաշխաշը աւելի շատ զոհեր
է տարել և տանում է ամեն տարի, քան թէ
զանազան մանկական վարակիչ հիւանդութիւն-
ները, ինչպէս են՝ ծաղիկը, բկացաւը, կար-
մրուկը և ալին։ Այդ պատճառով հարկաւոր է
ամեն կերպ զինուել այդ վնասակար սովորու-
թեան դէմ և միանգամայն վերջ տալ նրա
գործածութեան։

7. Ե՞րբ ԿԱՐԵԼԻ է ԵՐԵԽԱՅԻՆ, ԲԱՅԻ ՄՈՐ
ԿԱԹԻՑ, ՆԱԵՒ ՈՒՐԻՇ ԿԵՐԱԿՈՒՐ ՏԱԼ

Ուրիշ կերակուր տալու ժամանակը ար-
դէն ինքը բնութիւնը ցոյց է տալիս մեզ.
մեզ մնում է միայն իմաստութեամբ հետևել
բնութեան խորհրդին։ Նորածին երեխան ըն-
դունակ է միմիայն ծծելու, այդ պատճառով
էլ նա կարող է կերակրուել միմիայն հեղուկ
նիւթով, այսինքն կաթով։ Թողէք երեխան
հանգիստ ծծի իր հարազատ մօր ծիծը, մինչեւ
որ ատամները կը սկսեն գուրս գալ, որը տե-
ղի է ունենում սովորաբար 6—8 ամսից լե-
տոյ։ Ատամները դուրս գալուց լետոյ միայն,
և այն էլ եթէ երեխան առողջ է և ամուր
կազմուածքով, մայրը կարող է զգուշութեամբ
և փոքր առ փոքր սովորեցնել երեխալին կո-
վի կաթի կամ ֆօփի (Կաշա)։ Բայց հէնց որ տե-
սաւ, որ այդ կողմնակի նիւթերով երեխալի
փորը խանգարվում է, իսկոյն պէտք է թող-
նել և կերակրել դարձեալ միմիայն ծծով։ Իսկ
եթէ որևիցէ խանգարմունք չէ գոյանում,

այն ժամանակ կարելի է կովի կաթը և փօփը շարունակել և կամաց-կամաց սովորեցնել նաև ձուի, ծեծած մսի և այլ այդպիսի թեթև և սննդարար նիւթերի:

Ահա այդպիս զգուշութեամբ և առտիճանաբար պէտք է սովորեցնել երեխային կողմնակի կերակուրների. իսկ մեր մէջ սովորաբար հէնց առաջին շաբաթներից սկսում են խցկել երեխայի բերանը ամեն տեսակ բան. Հաց, միս, թէլ, շաքար և այլն: Հետեանքը ալն է լինում, որ երեխայի քնքոյշ կազմուածքը անկարող լինելով տանել այդ անսովոր բեռներին, ընկճվում և կորչում է նրանց տակ: Մի խօսքով՝ երեխային կողմնակի կերակուր կարելի է տալ միայն վեց ամիսը անցնելուց յետոյ և այն էլ մեծ զգուշութեամբ և աստիճանաբար, ինչպէս որ ասուած է վերեւում:

8. Ե՞րբ եի ի՞նչՊէս Պէտք է երեխներին ծծից ԿՏՐԵԼ

Երեխային պէտք է ծիծ տալ մինչև մի տարեկան հասակը. նախ՝ մինչև այդ ժամանակ երեխան արդէն բաւականաչափ մեծացած և սովորած է լինում ուրիշ կերակուրների. նա արդէն ունենում է 4—8 ատամ, որոնցով կարող է ոչ միայն հեղուկ, այլ և աւելի կոշտ բաներ ուտել. բացի սրանից, այդ ժամանակ մօր կաթը արդէն զգալի կերպով պակասում է և կորցնում իր սննդարար յատկութիւնը, այնպէս որ նա այլ ևս անզօր և մինչև իսկ վնասակար է դառնում երեխայի համար:

Հարկաւոր դէպքում, օրինակի համար մօր հիւանդութեան կամ մահուան պատճառով, առողջ երեխային կարելի է մի տարուանից էլ վաղ կտրել ծից, իսկ թոյլ երեխային պէտք է շարունակել ծիծ տալ նաև մի տարին լըրանալուց յետոյ: Նատ անգամ մայրերը սովորականից աւելի ուշ են կտրում երեխալին

ծծից, կարծելով, թէ քանի որ ծիծ են տալիս, չեն կարող յղանալ. սակայն այդ կարծիքը սխալ է, որովհետև ծիծ տուող կինը նոյնպէս հեշտ կարող է յղանալ, ինչպէս և չը տուողը:

Այդպէս ուրեմն երեխալին ծծից կտրելու ամենալաւ ժամանակը մի տարեկան հասակն է. միայն թէ նախ քան ծծից կտրելը՝ միշտ պէտք է աչքի առաջ ունենալ երեխալի առողջութիւնը և աշխատել, որ նա արդէն բաւականաչափ պատրաստուած լինի օտար կերակուրների համար: Սրա համար, ինչպէս նախընթաց գլխում լիշուած է, հարկաւոր է արդէն վեց ամսական հասակից կամաց-կամաց սովորեցնել երեխալին կովի կաթի, ձուի, փօփի և այլ թեթև կերակուրների: Երբ երեխան արդէն սովոր է այդ կերակուրներին, այն ժամանակ ծծից կտրելը հեշտ է և աննկատելի: Շատ անգամ ծծից կտրելու համար մայթերը կուպը կամ որևիցէ դառը բան են քսում պտուկներին, որպէս զի երեխան զզուի մօր ծծից. բայց նախ՝ այդ նիւթերը ինքն ըստ ինքեան վնասակար են թէ մօր և թէ երեխալի համար, և երկրորդ՝ ամենևին հարկաւորութիւն չը կալ այդպիսի խորամանկու-

թիւնների դիմել, քանի որ վերոյիշեալ միջոցով շատ հեշտ է ծծից կտրել:

Երբ երեխալի փորը լուծում է, այդ ժամանակ չէ կարելի նրան ծծից կտրել: Պէտք է նմանապէս լաւ լիշել, որ ծծից կտրելու ամենավտանգաւոր ժամանակը ամառն է, երբ առանց այն էլ եղանակի տաքութիւնից երեխանները ենթարկուած են լինում փորուծութեան և զանազան ստամոքսալին խանգարմունքների: Այդ պատճառով ամառուած է երեխալին ծծից կտրել, այլ պէտք է յետաձգել մինչև ձմեռ:

9. Ի՞նՉՊԻՍ ՊԵՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԵՐԵԽԱՆԵ-
ՐԻՆ ԾԾԻՑ ԿՏՐԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ

Բնութիւնը ինքը արդէն ցոյց է տալիս
մեզ, թէ երբ կարող է երեխան հեղուկ կե-
րակրից անցնել աւելի կոշտ կերակրի: Երբ ե-
րեխայի ատամները սկսում են դուրս գալ,
որը տեղի է ունենում մօտաւորապէս առաջին
տարուայ վերջում, երեխան արդէն պատրաստ
է հեղուկ կերակրից կամաց-կամաց անցնել
աւելի պինդ կերակրի: Այդ ժամանակ արդէն
նրան կարելի է, բացի կաթից և փօփից,
տալ նաև միս, որը սկզբում պէտք է լինի
շատ մանր ծեծած: Այնուհետև, քանի որ ա-
տամների թիւը սկսում է շատանալ, միսը կա-
րելի է աւելի խոշոր ծեծել և մսի հետ միա-
սին տալ նաև գետնախնձոր և հաց. միայն
պէտք է աշխատել, որ հացը նոր թխած չը
լինի, որովհետև նոր թխած հացը շատ ան-
գամ ծանր է լինում նոյն իսկ հասակաւորնե-
րի ստամոքսի համար: Եթէ երեխայի փորը
կարգին է, կարելի է տալ նաև հասած և ոչ

թթու պտուղներ, օրինակի համար տանձ,
խնձոր, խաղող և այլն, միայն թէ այդ ամե-
նը շատ չափաւոր կերպով:

Գալով խմելիքին՝ մինչև երեք տարեկան
հասակը երեխայի համար ամենալաւ խմելիքը
կաթն է, իսկ կաթից յետոյ՝ մաքուր աղբիւրի
ջուրը. ուր այդպիսի ջուրը չը կալ, այլ գործ
են ածում հորի ջուր, այդպիսի տեղերում ե-
րեխայի համար աւելի օգտակար է եռացրած
և յետոյ սառցրած ջուրը: Թէլը բոլորովին
աւելորդ է երեխաների համար, իսկ գինին,
օդին և ուրիշ ոգելից ըմպելիքները միանգա-
մայն վնասակար և վտանգաւոր են: Մեզ յայտ-
նի են մարդիկ, որոնք փոքր ժամանակուա-
նից սովորել են օդու և գինու գործածու-
թեան և ապագայում դարձել են հարբեցող-
ներ և մտաւորապէս անընդունակ և ապուշ
էակներ: Մեզանում շատ անգամ է պատա-
հում, որ զուարճութեան համար երեխաներին
տալիս են գինի, բայց այդ զուարճութիւնը
ապագայում շատ թանգ է նստում ծնողնե-
րին:

Քաղցրեղէնները և իւղալից կարկանդակ-
ները խանգարում են երեխաների ստամոքսը
և սովորեցնում են նրան որկրամոլութեան.

այդ պատճառով պէտք է խուսափել նրանցից:
Երեք տարեկան հասակից արդէն կարելի է
երեխաներին տալ այն բոլոր կերակուրները,
որոնցով կերակրվում են հասակաւորները:

Բայց պէտք է լաւ լիշել, որ նոյն իսկ
ամենասննդարար կերակուրը կարող է վնասա-
կար լինել երեխաների համար, եթէ նրանք
կերակրվում են անկանոն կերպով—շատ յա-
ճախ կամ մեծ քանակութեամբ։ Այդ հասա-
կում պէտք է ուրեմն ուշադրութիւն դարձ-
նել նաև կերակրի չափի և ժամանակի վրայ։
Անկանոնութիւնից խոյս տալու համար պէտք
է սովորեցնել երեխաներին միշտ որոշեալ ժա-
մանակին և որոշեալ քանակութեամբ կերա-
կրուել։ Երկրորդ տարեկան հասակում բաւա-
կան է օրական հինգ անգամ, իսկ երեք տա-
րեկան երեխան պէտք է կերակրուի օրական
3—4 անգամ, այսինքն համարեա այնքան
անգամ, ինչքան անգամ և հասակաւորները։

Պէտք է խոյս տալ նմանապէս զանազան
համեմներից և կծու կերակուրներից, ինչ-
պէս, օրինակ, մանանեխից, թթուեղէնից և
այլ այդպիսի բաներից։

10. Ի՞նչՊէս ՊէՏՔ է ՀԱԴՅՆԵԼ ԵՐԵԽԱՆԵ-
ՐԻՆ։—ՀԱՐԿԱԿՈՐ Է՝ ԲԱՐՈՒԹԵԼ, ԹԵ ՈՉ

Երեխաների հագուստը պէտք է լինի
տաք և արձակ։ Երեխան աւելի քնքոյշ և ա-
ւելի մըսկան է. այդ պատճառով նա աւելի
շուտ է ենթարկվում եղանակի փոփոխութեան
և աւելի հեշտութեամբ է մըսում ու հիւան-
դանում։ Բայց հարկաւոր էլ չէ շատ տաք
հագցնել երեխալին, որովհետեւ այդպիսով ե-
րեխան աւելի նազուք և թուլակազմ է դառ-
նում։ Բացի սրանից, պէտք է հոգ տանել,
որ երեխալի շապիկը և առհասարակ սպիտա-
կեղէնը, ինչքան կարելի է, փափուկ կտորից
լինի, որովհետեւ կոշտ կտորից երեխալի քնքոյշ
կաշին գրգռվում է և առաջանում են զանա-
զան բշտիկներ և քերթուածներ։ Վերջապէս
հարկաւոր է, որ երեխալի հագուստը յարմար
լինի, այսինքն ոչ նեղ, ոչ լայն և ոչ էլ ծանր։
Երեխալի առաջին հագուստը բարուրն է։
Երեխաներին բարուրելը շատ հին սովորու-
թիւն է և տարածուած է համարեա բոլոր

ազգերի մէջ: Բարուրելը անհրաժեշտ է համարվում հետևեալ պատճառներով: Առաջինը՝ կարծում են, թէ բարուրը փրկում է երեխային զանազան հաշմութիւններից. օրինակի համար, եթէ երեխայի գլուխը անկանոն է կամ ծռուած, կարծում են, թէ բարուրելով կարելի է գլուխը ուղղել: Երկրորդ՝ կարծում են, թէ բարուրած երեխան աւելի հեշտ և աւելի անվտանգ կերպով կարելի է տեղից վերցնել, մինչդեռ առանց բարուրի դիւրութեամբ կարելի է վայր ձգել: Երրորդ՝ ասում են, որ բարուրուած երեխան քնած տեղը վախից վեր չէ թռչում, ձեռքերով ինքն իրեն անհանգիստ չէ անում և իր փոքրիկ սուր եղունգներով մարմինը չէ չանկուում: Վերջապէս ասում են, որ բարուրած երեխան մատնուած լինելով կատարեալ անշարժութեան, չէ կարող երեսի վրայ ընկնել և ինքն իրեն խեղդել:

Սակայն այդ բոլոր պատճառաբանութիւնները սխալ և անհիմն են: Կան ազգեր և նրանց թւում վերին աստիճանի քաղաքակիրթ անգլիացիները, որոնք երեխաներին երբէք չեն բարուրում և սակայն նրանց երեխաները աշխարհիս ամենաառողջ և ամենաապինդ երեխա-

ներն են: Եւ լիրաւի, այդ առիթով եղած գիտնական հետազոտութիւնները ապացուցանում են, որ բարուրելը, մանաւանդ պինդ բարուրելը, վնասակար է, որովհետեւ խանգարում է երեխայի ֆիզիքական զարգացումը, սեղմում է նրա կուրծքը և փորը և այդպիսով խանգարում շնչառութիւնը և մարսողութիւնը: Բարուրը առաջացնում է արեան աւելորդ հոսանք դէպի գլուխը և այդպիսով վնասում երեխայի ուղեղը, և, վերջապէս, շատ անգամ նա պատճառ է լինում զանազան ծռութիւնների, քանի որ երեխայի քնքոյշ խաղերը և ոսկորները ամեն մի ճնշումից հեշտութեամբ խախտվում են իրենց տեղից: Զուր չեն երեխաները այնպէս ազիսորմ լաց լինում բարուրելու ժամանակ. կարծես նրանք բնազդմամբ հասկանում են այդ վատ սովորութեան վնասակար հետևանքները:

Նորածին երեխաներին պէտք է բարուրել այնպէս, ինչպէս բարուրում են անգլիացիները: Նախ պէտք է հագցնել նրան մի թեթև ու կարճ շապիկ՝ առանց կռների, այնուհետեւ պէտք է վերցնել մի կտոր փափուկ շոր՝ մի տրշին երկարութեամբ և մի արշին լայնութեամբ, երեխային դնել այդ շորի վրայ,

այնպէս որ գլուխը ընկնի շորի մի անկիւնի,
իսկ ոտները միւս անկիւնի հանդէպ. ոտների
կողմի անկիւնը պէտք է բարձրացնել և նրա-
նով ծածկել փորը, և այնուչետև կողքերի ան-
կիւններով ծածկել մարմնի մնացած մասերը:
Այդպիսով գլխի կողմում ինքն իրեն կազմվում
է մի թեթև գլխարկ, որը միանգամայն բա-
ւական է երեխալի գլուխը պահպանելու հա-
մար: Այնուչետև պէտք է փաթաթել փոքրիկ
մանկական վերմակի մէջ: Այդպիսով երեխալի
համար կազմվում է մի փոքրիկ բոյն, որի մէջ
նա զգում է իրեն թէ ազատ, թէ տաք և
թէ յարմար: Որպէս զի երեխան ոտներով և
ձեռքերով իր բոյնը ցըիւ չը տալ և չը բա-
ցուի, կարելի է երկու տեղ թեթև կապով
բարուը ամրացնել: Իսկ երբ երեխան արդէն
երկու ամսական գառաւ, այլ ևս ոչ մի բա-
րուը հարկաւոր չէ. այդ ժամանակ պէտք է
մի երկար շապիկ կարել, որի երկարութիւնը
աւելի լինի երեխալի հասակից. ոտների տակ
այդ շապիկը պարկի բերանի պէս կապել, որ-
պէս զի ոտները չը մրսեն, և ազատ թողնել
երեխալին այդ պարկանման շապկի մէջ, որ թէ
տաք է լինում, թէ ընդարձակ և թէ, վեր-
ջապէս, աւելի էժան, քան թէ մեր բարդ բա-
րուըները:

Դ վերջոյ պէտք է ասել, որ երեխան
ծնուելու ժամանակ՝ շատ անգամ տատմէրնե-
րը իրենց գլխու սկսում են ուղղել երեխալի
գլուխը, ողնաշարը, ոտները, ձեռները և ալին:
Այդ գործողութիւնը նրանք կատարում են
այնպիսի ուժով և այնպէս կոշտ կերպով, որ
շատ անգամ ոսկորը կոտրվում կամ տեղից
դուրս է գալիս: Երբէք չը պէտք է թուլ տալ
երեխալին ուղղել, որովհետև այդ գործողու-
թիւնը բացի վնասից ուրիշ ոչ մի օգուտ չէ
տալիս:

11. ԵՐԵԽԱՅԻ ԱՆԿՈՂԻՆԸ:—ՕՐՈՐՈՅ ԵՒ
ՆԱԽԻԿ

Երեխան օրուայ մեծ մասը անց է կաց-
նում անկողնում. այդ պատճառով պէտք է
առանձին ուշք դարձնել անկողնի յարմարու-
թեան վրայ: Երեխայի անկողինը պէտք է լի-
նի մաքուր, հարթ, ոչ կոշտ և ոչ էլ շատ
փափուկ: Նատ յարմար է անկողինը պատրաս-
տել մաքուր և թարմ չոր խոտից կամ յարդից.
փափկութեան համար վրայից կարելի է
ծածկել մի քանի ծալք փափուկ փալասով: Խո-
տը և յարդը շուտ-շուտ պէտք է փոխել, և
ամեն անգամ փոխելիս՝ նաև լուանալ շորը:
Բարձը պէտք է լինի փոքր և նոյնպէս լցրած
խոտով կամ ձիու մազով: Վերմակը, նայելով
տարուայ եղանակին, պէտք է լինի աւելի կամ
պակաս տաք:

Օրօրոցների և նանիկների (լոլեկա) ծագու-
մը շատ հին է: Դեռ ևս այն ժամանակ, երբ մեր
նախահայրերը ապրում էին անտառներում, ի-
րենց զաւակներին զանազան սողուններից և գա-

զաններից պլաշտանելու համար ձգում էին
պարկի մէջ և կախում ծառերի ճիւղերից:
Այդ պարկերը կամաց-կամաց կատարելագոր-
ծուելով ծնունդ տուին այժմեան օրօրոցնե-
րին և նանիկներին: Սակայն այդ օրօրոցները
շատ վնասակար են, մանաւանդ եթէ երե-
խային օրօրում են սաստիկ կերպով, անկանոն
և չափից գուրս շատ: Օրօրելուց առաջանում
է արեան հոսանք դէպի երեխայի գլուխը, որը
պատճառ է դառնում գլխի պտըտելուն, ուշա-
թափութեան և մի տեսակ արբեցութեան:
Եւ եթէ այդ երեսովները յաճախ են կրկնվում,
երեխան ենթարկվում է զանազան ուղե-
ղային հիւանդութիւնների, որոնցից և մեռ-
նում է:

Բացի սրանից, շատ անգամ այնպէս սաստիկ
օրօրում են, որ երեխան օրօրոցից գուրս
է թռչում և կոչելով գետնին, վնասվում է:
Այդ պատահում է մանաւանդ այն դէպիքերում,
երբ երեխային օրօրելը յանձնում են փոքրա-
հասակներին, որոնք երեմն գուարծութեան
համար, երբեմն էլ այդ պաշտօնից դժգոհ լի-
նելու պատճառով՝ սկսում են սաստիկ կերպով
օրօրել օրօրոցը: Պատահում է նոյնպէս, որ
նանիկի թոկը կտրվում կամ մեխը պոկվում է

և երեխան նանիկի հետ միասին գլորվում է գետնին, կամ թէ չէ հենց ինքը երեխան շատ շուռ ու մուռ գալով օրօրոցի կամ նանիկի մէջ, յանկարծ վայր է ընկնում։ Մի խօսքով, օրօրոցը վնասակար բան է. այդ պատճառով պէտք է աշխատել գործածութիւնից դուրս ձգել նրան։ Ախալ է, որ ասում են իբր թէ երեխան առանց օրօրելու չէ կարող քնել և հանգստանալ. կան ազգեր, որոնք վաղուց արդէն ձեռք են վերցրել օրօրոցից, սակայն նրանց երեխաները առանց օրօրոցի էլ հիանալի կերպով հանգիստ քնում են իրենց փոքրիկ մահճակալների մէջ։ Եթէ երեխան առանց օրօրոցի չէ քնում, պատճառը այն չէ, որ օրօրոցը անհրաժեշտ բան է, այլ պատճառը այն է, որ երեխալին սովորեցրել են միշտ օրօրուելով քնել։ Եթէ ծխողները չեն կարող առանց ծխախոտի մնալ, պատճառն այն չէ, որ ծխելը անհրաժեշտ է, այլ որովհետև նըրանք արդէն սովորել են ծխախոտի թոյնին։ Ուրեմն ամբողջ խնդիրը ախտեղ միմիայն վատ սովորութեան մէջն է. իսկ վատ սովորութիւնից միշտ պէտք է խոյս տալ։

Նորածին երեխան չէ կարող ոչ գլուխը բարձրացնել, ոչ նստել և ոչ էլ տեղիցը շուռ

գալ. նա կարող է միայն պառկել և այն էլ գլխաւորապէս մէջքի վրայ։ Այդ պատճառով նորածիններին կարելի է միայն լաւ փաթաթել և դնել բարձի կամ մահճակալի վրայ։ Նա ամեն տեղ էլ հանգիստ կը պառկի և վայր չի ընկնիլ։ Բայց երբ երեխան սկսում է մեծանալ, գլուխը տեղից բարձրացնել, պառկած տեղը շուռ գալ և մինչև անգամ նստել, այդ ժամանակ արդէն հարկաւոր է տեղաւորել նրան յարմար մահճակալի մէջ։

Հին ժամանակներում, իսկ գիւղերում նոյն իսկ այժմս, մարդիկ շատ անգամ ասլրում են գոմերի մէջ՝ իրենց տան կենդանիների հետ միասին։ Երբ երեխան ծնվում էր, շատ անգամ նրան տեղաւորում էին դատարկ մսուրի մէջ, ուր ձիերի և կովերի համար կերակուր են ածում։ Յալտնի է, որ Քրիստոս ծնուելուց յետոյ դրուեց մսուրի մէջ։ Հիմա էլ ամենալաւ մանկական մահճակալները շինվում են մսուրի ձեռով, և պէտք է ասել, որ նրանք շատ յարմար և էժանագին են։ Ամեն մարդ, որ ընդունակ է կացին բանեցնելու, հեշտութեամբ կարող է ինքը իր զաւոկի համար այդ տեսակ մահճակալ պատրաստել։ Այդ մահճակալներում, իհարկէ, չէ կարելի երեխալին օրո-

ըել. բայց, ինչպէս ասացինք, Հարկաւոր էլ չէ օրօրել, քանի որ օրօրելը վնասակար և վտանգաւոր է:

Օրօրոցը և մաշճակալը սովորաբար ծածկում են վարագոյրներով, որպէս զի մուժ լինի և երեխան կարողանալ հեշտութեամբ քնել: Բայց նոյն իսկ այդ վարագոյրները, մանաւանդ եթէ նրանք պատրաստած են թանձր և գունաւոր կտորից, խանգարում են երեխայի հանգիստ քունը: Թանձր վարագոյրների տակ օդը շուտով ապականվում և խեղգող է դառնում. երեխան սկսում է անհանգիստ լինել կամաց-կամաց, նա թուլանում և մեղկանում է, շատ հեշտութեամբ ենթարկվում է բարակացաւի և այլ մաշող հիւանդութիւնների: Վարագոյրի տակ ապրելը երեխայի համար միենոյնն է, ինչ որ կեղտոտ և հոտած գոմում ապրելը: Միմիայն ամառ ժամանակ կարելի է գործածել վարագոյր՝ ճանձերից և մոծակներից երեխային պաշտպանելու համար. բայց և այդ դէպէում անհրաժեշտ է, որ վարագոյրը պատրաստած լինի նուրբ ձանձախատիթից (ԿԱԸԵՅ), որպէս զի օդը կարողանալ ազատ խաղալ մաշճակալի մէջ:

12. ԵՐԵԽԱՅԻ ՔՆԵԼՈՒ ԺԱՄԸ ԵՒ ՆՆՉԱ-
ՐԱՆԸ

Նորածինները համարեա ամբողջ օրը քնած են լինում. նրանք զարթնում են ծիծուտելու կամ միզելու համար և կամ այն ժամանակ, երբ որևէ պատճառով անհանգիստ են լինում: Ծիծ ուտելուց և փոքր ինչ խաղալուց յետոյ նրանք կրկին քնում են:

Կէս տարեկան հասակից սկսած նրանք արդէն կարող են մի քանի ժամ արթուն մնալ, սակայն մինչև մի տարեկան հասակը օրուայ մեծ մասը այնուամենայնիւ քնով են անցկացնում: Երկրորդ և երրորդ տարեկան հասակում երեխան ցերեկը երկու ժամի չափ է միայն քնում, բայց երեկոյեան դարձեալ շուտով պառկում է քնելու, այնպէս որ օրուայ համարեա թէ կէսը քնում է: Զորբորդ և հինգերորդ տարեկանից սկսած ցերեկը այլ ևս չեն քնում, բայց գիշերը քնում են տասը-տասնումէկ ժամ շարունակ: Հետեւեալ տարիները քնելու ժամերը կամաց-կամաց պակա-

սում են, և տասներկու տարեկան հասակում երեխաները օրական ուժիննը ժամից աւելի այլ ևս չեն կարող քնել։ Երեխայի առողջութիւնը պահանջում է, որ նա քնի այնքան, ինչքան որ հարկաւոր է քունը լիովին առնելու համար։

Նորածինների քունը շատ խոր է լինում. սրա պատճառը մասամբ այն է, որ նորածիններեխաները սովորաբար փոքր ինչ խուլ են լինում, ուստի և ամեն ձայնից հեշտ չեն զարթնում։ Յետոյ ծծկեր երեխաները ընդհակառակը շատ անհանգիստ քուն են ունենում և հեշտութեամբ են քնից զարթնում։ չորս-հինգ տարեկան հասակում քունը դարձեալ խոր է դառնում, այնպէս որ երեմն մինչև անդամ ընկնում են մահճակալից առանց զարթնելու։

Որպէս զի երեխաների քունը խաղաղ և հանգիստ լինի, հարկաւոր է, որ ննջարանի օդը լինի մաքուր և թարմ, ազատ աւելորդ տաքութիւնից, ցրտից և խոնաւութիւնից։ Այդ պատճառով երեխաների մահճակալները պէտք է հեռու լինեն տաք վառարաններից, ծածկուած չը լինեն վարագոյրներով, տաք և կոշտ վերմակներով և շատ փափուկ կամ կոշտ դօ-

շակներով։ Երեխային քնացնելուց առաջ հարկաւոր է ննջարանի օդը լաւ մաքրել, պատուհանները կամ օդանցքները (ֆօրտոչկա) բանալով։ Քնած ժամանակ երեխայի գլուխը պէտք է բաց պահել և միայն ննջարանում շատ ցուրտ եղած ժամանակ՝ ծածկել թեթև գլխարկով։ Բացի սրանից պէտք է հոգ տանել, որ երեխան յարմար լինի պառկած, անկողինը խորդու և բորդ ու կոշտ չը լինի և երեխան պինդ սեղմուած չը լինի բարուրներով։

Զանագան հոտաւէտ նիւթերից և համալիներից, որոնցով սովորաբար զարդարում են երեխաների մահճակալները, պէտք է խոյս տալ, որովհետեւ դրանք բոլորը աւելորդ են։ և բացի վնասից, ոչ մի օգուտ չեն բերում։

Բնակրանը նրա համար է, որ մարդկարողանայ պաշտպանուել ցրտից, շոգից, անձրևից, ձիւնից և առհասարակ ընութեան ալլը և այլ վնասակար փոփոխութիւններից։ Բայց այլ պէտք է մոռանալ, որ այդ բոլոր անյարձարութիւններից զատ, մարդս անկարող է ապրել նաև ապականուած օդում, ինչպէս որ ձուկը չէ կարող ապրել ապականուած և նեխուած ջրի մէջ։

Մաքուր օդը կենդանացնում և նորո-

գում է մեր արիւնը, հետեաբար և մեր ամբողջ մարմինը, որը մաքուր օդի շնորհիւ լինում է աւելի զուարթ, աւելի առոյգ, աւելի առողջ: Ընդհակառակը՝ անմաքուր և վատ օդը թուլացնում և ենթարկում է մեր մարմինը ամենածանը հիւանդութիւնների:

Մաքուր օդ ասելով՝ մենք հասկանում ենք այնպիսի օդ, որը զերծ է ծուխից, մուրից (ԿՈՊՈՏԵ), փոշուց և նեխումից: Մաքուր օդը այն թարմ և ախորժելի օդն է, որի համար մեր կուրծքը կարծէք ինքն իրեն բացվում է և որը մենք գտնում ենք ոչ թէ տան չորս պատերի մէջ, այլ ազատ բակում, ազատ փողոցում, բաց երկնքի տակ:

Ամառ ժամանակ բանտոր մարդիկ օրուայ մեծ մասը անց են կացնում աւելի բաց օդի մէջ. իսկ ձմեռը մեծ մասամբ լինում են խրճիթներում, շատ անդամ իրար վրայ խըռնուած, կովերի, եղների, հորթերի և այլ տընալին կենդանիների հետ միասին: Այդ ամենի հետ խառնվում է նաև բուխարու ծուխը և կերակրի ճենճերահոտը: Այդպիսի խրճիթներում մաքուր օդ, իհարկէ, չէ կարող լինել: Շատ և շատ մարդիկ աննկատելի կերպով զոհ են գնում ձմեռուայ այդ սպանիչ օդին: Զոհ

են գնում՝ մանաւանդ երեխաները, որոնց կազմուածքը աւելի ևս թոյլ է և որոնք աւելի կարիք ունեն մաքուր օդի:

Մի ամերիկացի բժիշկ հաշուել է, թէ ինչքան մարդ է մեռնում միմիայն ապականուած օդի շնորհիւ: Բանից երեսում է, որ հարիւր մեռնողից քառասունը մեռնում է վատ օդի պատճառով: Մեր մէջ վատ օդից մեռնողների թիւը անտարակոյս աւելի ևս շատ է, քանի որ մեր բնակարանների առողջապահական պալմանները անհամեմատ աւելի վատ են, քան թէ Ամերիկայում:

Որպէս զի օդը, ինչքան կարելի է, մաքուր լինի, հարկաւոր է նախ խուսափել մի յարկի տակ շատ հոգի խռնուելուց. բնակարանից պէտք է գուրս հանել այն ամենը, ինչ որ փչացնում է օդը, այսինքն ընտանի կենդանիներին և հաւերին, որոնց համար բակի մի անկիւնում պէտք է միշտ մի առանձին տեղ ունենալ: Եւ վերջապէս, եթէ այդ բոլորը անկարելի է, պէտք է օրական գոնէ 3—4 անգամ տան պատուհանները և գոները բանալ և տասը ըստէի կամ քառորդ ժամի չափ բաց թողնել: Աւելի լաւ է տանը ցուրտ լինի, քան թէ հեղձուցիչ և ապականուած օդ:

Մըսելու երկիւղը չափազանցրած է և մեծ մասամբ բոլորովին անհիմն. մեզանում ամեն մի հիւանդութեան սկզբնապատճառը սովոր են փնտուել մըսելու մէջ. բայց այդ սխալ է և զուրկ գիտնական հիմունքից։ Եւրոպայում, մանաւանդ Գերմանիայում, շատ տեղ սովորութիւն է, որ ձմեռը քնում են բաց պատուհաններով՝ մի թեթև վերմակի տակ, այնու ամենայնիւ նրանք անհամեմատ առողջ են, քան թէ նրանք, որոնք, իբր թէ մըսելուց ազատ լինելու համար, փաթաթվում են տաք մուշտակների մէջ և տաք վերմակների տակ։

Երեխայի համար, ինչպէս ասացինք, մաքուր օդը աւելի ևս անհրաժեշտ է, քանի որ նա ոչ միայն պէտք է ապրի, այլ և պէտք է մեծանայ. իսկ անմաքուր օդի մէջ նա չէ կարող սնունդ առնել և մեծանալ։ Հետևաբար պէտք է հոգ տանել, որ երեխայի ննջարանում, ինչպէս և առհասարակ ամեն մի մարդկային բնակարանում, օդը լինի մաքուր և զով, մօտաւորապէս 12—15 աստիճան ըստ Ռէօմիւրի։

Բայց ինչքան էլ որ տան օդը մաքուր լինի, այնու ամենայնիւ մարդուս համար անհրաժեշտ է նաև ազատ օդ. առանց թարմ

և ազատ օդի մարդս մաշվում և հիւանդանում է։ Սրանում համոզուելու համար բաւական է նաև բանտարկեալների վրայ, որոնք զուրկ լինելով ազատ օդից, շուտով թուլանում և ենթարկվում են զանազան ծիւրիչ հիւանդութիւնների։

Այս պատճառով էլ երեխաների համար անհրաժեշտ է դրսի մաքուր օդը։ Ծնուելուց յետոյ առաջին շաբաթը երեխան գեռ ևս շատ մրսկան է լինում, որովհետև մօր արգանդում նա ապրում է տաք ջրի մէջ. այդ պատճառով էլ նրա համար դժուար տանելի է նոյն իսկ այն օդը, որ մենք ծծում ենք։ Ուստի առաջին շաբաթը աւելի լաւ է նորածնին ամենևին սենեակից դուրս չը բերել։ Բայց սկսած երկրորդ և երրորդ շաբաթից՝ տաք և խաղաղ եղանակին հարկաւոր է արգէն սովորեցնել նըրան ազատ օդին և ամեն անգամ աւելի և աւելի երկար պահել այդ օդի մէջ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս խորհուրդը վերաբերում է առողջ երեխաներին և այն էլ միայն այն ժամանակ, երբ երեխան քնատեղից նոր վեր կեցած կամ նոր լողացրած չէ։ Թաց շորի մէջ նոյնպէս չը պէտք է երեխակին սենեակից դուրս բերել։

Ինչքան երեխան աւելի լինի ազատ և

մաքուր օդի մէջ, այնքան այդ աւելի լաւ է
նրա առողջութեան համար: Երկրորդ տարե-
կան հասակից երեխային արդէն պէտք է սով-
րեցնել նաև ցուրտ եղանակին և միայն սաս-
տիկ ցրտի, քամու և խոնաւութեան ժամա-
նակ արգելել նրան տնից գուրս գալ: Մեզա-
նում երեխաները համարեա ամբողջ ձմեռը
բանտարկուած են ապրում տան մէջ, թէև
այդ ամենեին չէ փրկում նրանց այլւայլ տա-
րափոխիկ հիւանդութիւններից:

Նայեցէք կենդանիների ձագերին. ինչպէս
ուրախ և զուարթ թուշկոտում են նրանք
ազատ օդի մէջ. նրանք զրկուած չեն կենդա-
նութեան և առողջութեան այդ գլխաւոր աղ-
բերից: Ինչու ուրեմն մեր զաւակները պէտք
է զուրկ լինեն նրանից:

Մօտեցէք մեր երեխաների օրօրոցներին
և դուք իսկոյն կը զգաք այն նեխուած և
ապականուած օդը, որ օրերով և տարիներով
ծծում են այդ թուլ էակները: Եւ մի զար-
մանաք, որ ամեն տարի այդքան բազմաթիւ
զոհեր ենք տալիս մենք մահուան: Այդպիսի
օդով սնուող երեխաները միթէ կարո՞ղ են
կոռւել վարակիչ հիւանդութիւնների դէմ:

13. Ի՞նչՊէՍ ՊէՏՔ է ՍՈՎՐԵՑՆԵԼ ԵՐԵԽԱ-
ՆԵՐԻՆ ՆՍՏԵԼ, ՍՈՂԱԼ, ԿԱՆԳՆԵԼ ԵՒ ՄԱՆ-
ԳԱԼ

Վեցերորդ շաբաթում երեխան արդէն
սկսում է գլուխը կամաց-կամաց բարձրացնել,
բայց գլուխը պինդ պահել կարող է միայն ե-
րեք ամսից յետոյ. այդ պատճառով մինչեւ այդ
հասակը չը պէտք է երեխային բարձրացնել
կոների վրայ և կէս նստած գրութեան մէջ
պահել և կամ, ինչպէս շատ մայրել անում
են, նստացնել բարձերի արանքում. այդ բա-
նից երեխան կարող է կամ կուզ ստանալ կամ
կողքը ծռուել: Երեխան պէտք է նստել սո-
վորի երեք ամսից յետոյ և այն էլ կամաց-կա-
մաց: Միայն կէս տարեկան հասակից յետոյ
կարելի է երեխային թուլ տալ բաւականաչափ
նստել բարձերի արանքում. իսկ բոլորովին ա-
զատ և անվտանգ կերպով երեխան կարող է
նստել միմիայն ութ ամիսը լրանալուց յետոյ:

Հէնց որ երեխան սովորում է փոքր ինչ
նստել սովորաբար սկսում են պահել նրան

ձեռների և գլխաւորապէս ձախ ձեռքի վրայ:
Այդ սովորութեան հետեանքը շատ անգամ
այն է լինում, որ երեխան դառնում է կողքը
ծուռ: Այդ բանից խուսափելու համար՝ չը
պէտք է երեխային վեց ամսից առաջ ձեռքի
վրայ մանածել, իսկ մանածելիս էլ պէտք է
փոփոխակի թէ աջ և թէ ձախ ձեռքի վրայ
մանածել:

Երբ երեխան սովորում է բաւական պինդ
նստել, նա իսկոյն ձգտում է նաև սողալ: Շա-
տերը աշխատում են երեխային սողալ սով-
որեցնել արդէն վեց-եօթ ամսական հասակում,
բայց այդ հասակում դեռ շուտ է. երեխան
պէտք է սողայ այն ժամանակ, երբ նա ըն-
դունակ է ամուր և հաստատ կերպով նստել,
ալինքն իններորդ և տասերորդ ամիսներում:

Նստել և սողալ սովորելուց յետոյ՝ երե-
խան սկսում է կամաց-կամաց բարձրանալ ոտ-
քի. սկզբում նա միայն անշարժ կանգնում է,
իսկ յետոյ որեւիցէ բանից բռնած՝ փոքր առ
փոքր շարժվում է դէպի առաջ և այդպիսով
սովորում է մանգալ:

Հասկանալի է, որ երբ երեխան սկսում
է կանգնել և մանգալ, պէտք է աշխատել,
որ նա չընկնի և չը վնասուի. այդ նպատակի

համար բոլոր ազգերը ունեն զանազան տեսա-
կի գործիքներ, որոնց միջոցով երեխաները
սովորում են նստել և մանգալ: Բայց այդ
գործիքները բոլորն էլ վնասակար են, որով-
հետեւ փչացնում և ծռում են երեխաների ոտ-
ները: Երբ երեխան կանգնած է առանց գոր-
ծիքի, դադրելիս նա իսկոյն ընկնում և նրա-
տում է. բայց երբ նա կանգնած է գործիքով,
այլ ևս չէ կարող հանդարտ ընկնել նստատեղիի
վրայ, այլ ստիպուած է կանգնած մնալ ոտ-
ների վրայ, մինչև որ նրան կազատեն գործի-
քից: Այդպիսով նրա ոտները և մէջքը սաստիկ
դադրում, ուկորները սկսում են ծռմռուել և
երեխաների ոտները ծռվում, դառնում են
աղեղնաձև: Շատ անգամ էլ երեսսրբիչը անց
են կացնում երեխայի կոների տակովը և այդ
պիսով են աշխատում մանածել նրան. այդ
միջոցն էլ վնասակար է, որովհետեւ երեսսրբի-
չը խանգարում է երեխայի շնչառութիւնը և
սեղմելով կուրծքը, ծռում է ուկորները: Վնա-
սակար է նմանապէս երեխային ձեռքից բըռ-
նած մանածել. այդ դէպքում երեխայի մէկ
ուսը բարձր է լինում, իսկ միւսը ցած, որ
նոյնպէս պատճառ է դառնում ծռութեան:

Երբ երեխան ուզում է կանգնել և ման-

գալ, ամենից լաւն է թողնել նրան թախտի
մօտ, որ կպած է լինում պատին։ Երեխան
թախտից բունած կարող է կանգնել և ման-
գալ, ինչքան որ ոյժ ունի, իսկ երբ դադրի,
հեշտութեամբ կարող է ինքն իրեն նստել։
Այդպիսով նա կամաց-կամաց և առանց որևէ
վտանգի կը սովորի թէ կանգնել և թէ ման-
գալ։

14. ՄԱՆԿԱԿՈՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Չորս ամսական հասակից երեխաները ըս-
կըսում են ձեռք մեկնել իրենց մօտ գտնուած
իրերին և խաղալ նրանց հետ։ Այդ պատճա-
ռով հէնց այդ ժամանակից սկսում են երե-
խաների ձեռքը տալ զանազան խաղալիքներ։
զանգակներ, գնտակներ, տիկնիկներ և այլն։
Աչա այդտեղ չը պէտք է մոռանալ, որ երե-
խաներին կարելի է տալ միմիայն փափուկ խա-
ղալիքներ, որպէս զի որևիցէ վնաս չը հասնի-
նոյնպէս պէտք է խոյս տալ ապակեալ և գու-
նաւոր խաղալիքներից։ առաջինները կարող են
կոտըուել և վնասել երեխալին, իսկ երկորդ-
ները շատ անգամ պարունակում են թունա-
ւոր ներկեր, որոնցից կարելի է թունաւորուել։
Չը պէտք է տալ նմանապէս պղնձեալ իրեր,
օրինակի համար, փող կամ մետաղեալ կոճակ-
ներ, որովհետև պղինձը նոյնպէս թունաւոր
է։ Երեխաների ձեռքը չը պէտք է տալ նաև
մանր առարկաներ, ինչպէս, օրինակ՝ մանր փող,

լուլունքներ և այլն, որովհետեւ շատ անգամ
երեխանները կուլ են տալիս կամ թէ չէ՝ խը-
րում են քթի և ականջի ծակերը, որտեղից
դժուար է դուրս հանել։ Այդ բոլորը կարող
է շատ վտանգաւոր լինել երեխայի համար։

Մեծանալով երեխանները խաղալիքներից
անցնում են զանազան խաղերի։ Սովորաբար
նրանք խաղերում աշխատում են նմանել մե-
ծերին, այդ պատճառով, նաև լով թէ ինչ
մարդիկներով են շրջապատուած, նրանք են-
թարկվում են լաւ կամ վատ օրինակի։

Մանկական զուարձութիւններով երեխա-
նները պատրաստվում են ապագայ կեանքի հա-
մար. ուստի չը պէտք է արգելք լինել նրանց
անմեղ զուարձութիւններին. զուարձանալով՝
երեխան միենոյն ժամանակ ուրախանում էլ է.
իսկ ուրախութիւնը մեծ նշանակութիւն ունի
երեխայի թէ առողջութեան և թէ զարգաց-
ման համար։

Այն երեխան, որ չէ տեսնում իր շուրջը
զուարձալի իրեր և ուրախ դէմքեր, թառա-
մում և կորչում է ինչպէս մի ծաղիկ, որը
առանց արևի չէ կարող բացուել իր ամբողջ
գեղեցկութեամբ։ Եթե երեխան ուրախ է, կը
նշանակէ նա առողջ է։ Ուրախ երեխայի բնա-

որութիւնը աւելի մեղմ, աւելի հաստատ և
աւելի քաջ է լինում։

Երեխայի առողջութեան համար առան-
ձնապէս վնասակար են ծեծը և առհասարակ
փիղիքական պատիժները. դրանք փչացնում
են ոչ միայն երեխայի մարմինը, այլ և հոգին։
Ծեծուող երեխան մարմնով լինում է թոլ,
շատ անգամ նոյն իսկ հաշմանդամ, իսկ բնա-
ւորութեամբ՝ ստախօս, չարասիրտ և յաճախ
անընդունակ և ապուշ։

15. ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՍԱՌՈՒԹԻՒՆԸ

Ով որ ատամի ցաւ է ունեցել կամ ում
որ ատամները թափուել են, նա լաւ է հաս-
կանում ատամների նշանակութիւնը։ Ատամ-
ները անհրաժեշտ են նախ կերակուրը ծամե-
լու և երկրորդ խօսքերը մաքուր արտասանե-
լու համար։ Առանց ատամների ստամոքսը
վատ է մարսում կերակուրը։

Առաջին ատամները, որոնք անուանվում
են կաթնատամներ (որովհետեւ բուսնում են այն
ժամանակ, երբ երեխան դեռ կաթ է ուտում),
սովորաբար դուրս են գալիս մօտ վեց ամսա-
կան հասակում։ Ամենից առաջ դուրս են գա-
լիս երկու ներքին կտրոցները, յետոյ երկու
վերին կտրոցները, իսկ տարուայ վերջում՝
մնացած կտրոցները, ընդամենը ութ հատ-
չորսը վերեւում, իսկ չորսը ներքեւում։ Առա-
ջին ատամները սովորաբար շատ հեշտ են դուրս
գալիս, մեծ մասսամբ համարեա թէ աննկատե-
լի և լանկարծակի կերպով։ Երբեմն միայն այդ
ատամները դուրս գալիս երեխաները անհան-

գիստ են լինում, տաքացնում են, լնտերքը
սկսում են ցաւել, բերանից թուք է գալիս և
քունը խանգարվում է։ Երկրորդ տարուայ
սկզբում դուրս են գալիս առաջին չորս սե-
ղանատամները, այնուհետեւ ժանիքները, իսկ
երկրորդ տարուայ վերջում—մնացած սեղա-
նատամները։ Բոլոր այդ ատամները կտրոցնե-
րից մի քիչ աւելի դժուարութեամբ են դուրս
գալիս։ Կաթնատամները լինում են 20 հատ
և մնում են մինչև եօթը տարեկան հասակը։
Պատահում է, որ ատամները դժուարութեամբ
և անկանոն կերպով են դուրս գալիս. օրինա-
կի համար պատահում է, որ երեխան ծնվում
է ատամներով, միայն թէ այդ ատամները
շատ թոյլ են լինում և միայն արգելք են
դառնում ծիծ ուտելուն. այդ տեսակ ատամ-
ները աւելի լաւ է հանել տալ։ Երբեմն ա-
տամները բուսնում են երկրորդ կամ երրորդ
ամսում, երբեմն էլ ընդհակառակը՝ իններորդ
կամ տասերորդ ամսում։ Ատամների ուշ
դուրս գալը ցոլց է տալիս, որ երեխան թոյլ
է և հիւանդոտ։ Ատամները ուշ բուսնելիս
շատ անդամ նկատվում է ցաւ, փորհարինք,
սաստիկ տաքութիւն և ալն։

Պատահում է, որ ատամների թիւը շատ

քիչ է լինում, երբեմն ընդամենը չորս ատամ ամբողջ կեանքում: Եւ ընդհակառակը՝ պատահում է, որ ամեն մի ծնօտի վրայ մէկ կարգի փոխանակ՝ երկու-երեք կարգ ատամ է բուսնում, թւով մինչև եօթանասուն հատ: Բայց այդ գէպքերը, իհարկէ, հազուագիւտ գէպքեր են:

Վեց-եօթ տարեկան հասակում երեխաները սկսում են երկրորդ անդամ ատամ հանել. կաթնատամները թափվում են և փոխարինվում մշտական ատամներով: Վերջապէս դուրս են գալիս նաև մնացած ութ սեղանատամները, այնպէս որ տասներկու տարեկան հասակում երեխան ունենում է արդէն քսանութ մշտական ատամ: Քսանից մինչև քսան և հինգ տարին դուրս են գալիս այլ ևս չորս վերջին ատամները, որոնք անուանվում են «իմաստութեան ատամներ»: Այդպիսով բոլոր ատամների թիւը գառնում է երեսուներկու: Իմաստութեան ատամները երբեմն բոլորին դուրս չեն գալիս:

Մարդուս համար ծանր է ապրել առանց ատամների կամ հիւանդ ատամներով. այդ պատճառով հէնց սկզբից պէտք է լաւ խնամք տանել ատամների առողջութեան մասին: Երեխաները իրենց ատամները փչացնում են մեծ

մասամբ զանազան քաղցրեղէններով: Փոխանակ անվնաս պտուղների, սովորութիւնն է երեխաների բերանը քաղցրացնել շաքարով և քաղցրաւենիքներով:

Բայց ամենից աւելի վնասակար են ատամների համար շատ տաք կամ շատ պաղուտելիքը և խմելիքը, մանաւանդ տաքից յետոյ իսկոյն պաղ կամ պաղից յետոյ իսկոյն տաք բան բերանը դնելը: Վերցնենք մի այդպիսի օրինակ. ինչպէս որ սառը բաժակի մէջ տաք ջուր ածելիս բաժակը ճաքում է, այնպէս էլ սառը բանից յետոյ տաք բան ընդունելիս ատամները ճաքճքում են, որից յետոյ գոյանում են ծակեր և խոռոչներ. և այդպիսով ատամը փթում և ոչնչանում է: Սրանից հետեւում է, որ տաք կերակրից կամ տաք թէյից յետոյ իսկոյն սառը ջուր կամ սառը պտուղ չը պէտք է ուտել:

Բացի սրանից, չը պէտք է մոռանալ, որ կերակրից յետոյ ատամների վրայ և ատամների արանքներում մնում են կտորներ, որոնք փթում են և փթեցնում նաև ատամները: Այդ բանի առաջը առնելու համար պէտք է երեխաներին սովորեցնել օրը գոնէ մէկ անգամ, երեսը լուանալու ժամանակ, ատամները և ամբողջ բերանը ջրով մի լաւ ողողել:

16. ԵՐԲ ՊԵՏՔ Ի ԾԱՂԻԿԸ ԿՏՐԵԼ

Ամենքին արդէն յայտնի է, թէ ո՞ր աստիճան անհրաժեշտ է ծաղիկ կտրելը։ Եթէ շտապելու առանձին կարեք չը կայ, մենք խորհուրդ ենք տալիս ծաղիկը կտրել երեք ամսից ոչ առաջ, որովհետև մինչև այդ հասակը երեխաների կաշին այն աստիճան զգայուն և քնքոյց է, որ ծաղկի բշտիկները շատ խոշոր և ցաւեցնող են լինում։ Իսկ երեք ամիսը անցած՝ կաշին արդէն այնքան ամրանում է, որ առանց որևէցէ վտանգի կարելի է պատուաստել։ Սակայն եթէ որևէցէ տեղ յանկարծ ծաղիկ է ընկնում, այն ժամանակ այլ ևս չը պէտք է յետաձգել, այլ պէտք է պատուաստել նոյն իսկ նորածիններին։ միայն թէ այդ դէպքում ամեն մի թևի վրայ երկու պատուաստից աւելի չը պէտք է անել։ մեծ երեխաներին սովորաբար երեք պատուաստ են անում։

Ծաղիկը կտրելու ամենալաւ ժամանակը գարունն և աշունն է, այսինքն տարուայ այն

եղանակները, երբ ոչ շատ շոք է, ինչպէս ամառը, ոչ էլ այնպէս ցուրտ, ինչպէս ձմեռը։ Ամառը և ձմեռը երեխաների համար ծանրէ տանել այն ջերմը, որ առաջանում է ծաղիկը կտրելուց։

Երբ երեխաների մարմինը ծածկուած է զանազան բշտիկներով, այդ ժամանակ չը պէտք է ծաղիկը կտրել, որովհետև ամեն մի կողմնակի բշտիկ այդ դէպքում դառնում է ծաղկի բշտիկ։ այնպէս որ այդպիսի երեխաների մարմինը ծածկվում է այնպիսի խիտ բըշտիկներով, ինչպէս որ բնական ծաղկի ժամանակ։


Փորլուծութեան ժամանակ նոյնպէս չէ կարելի ծաղիկը կտրել, որովհետև այդ միջոցին պատուաստը վատ է բռնում։ Առհասարակ պէտք է ծաղիկը կտրել այն ժամանակ, երբ երեխան բոլորովին առողջ է։




ու աշխատ է զի՞ց ուսու ու դու որ այս պահը
ովան սերման ուսու սերման չէ ու զան
Եղիշ շունչ պահանջան զան և զանի
որդիքան և ուսու ուսու զան

և առ աթեմ զանիցու պահանջան չի
ու առ աթեմ զան պահանջան ու պահանջ
չի առ աթեմ զան պահանջան և առ աթեմ
և առ աթեմ զան պահանջան պահանջան
պահանջան զան պահանջան պահանջան
զան պահանջան և առ աթեմ զան պահանջան
զան պահանջան զան պահանջան պահանջան

և առ աթեմ զան պահանջան պահանջան
պահանջան զան պահանջան պահանջան
զան պահանջան զան պահանջան պահանջան
զան պահանջան զան պահանջան պահանջան
զան պահանջան զան պահանջան պահանջան





757, 758
3p

2621

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0071697

ՀՀ Ազգային գրադարան



NL0071696

